«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ԿՏՊՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3
ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ 5
ԱՄՓՈՓՈՒՄ 5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 10
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 10
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 10
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 12
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 12
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 13
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 17
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 20
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 23
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 26
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 28
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 30
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 32
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 34
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 37
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 38
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 38
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 39
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 41
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 42
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 43
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 44

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը (ԿՏՊՔ) հիմնադրվել է 1966 թվականին որպես Հրազդանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: Այն 2000 թվականին վերանվանվել է Հրազդանի պետական քոլեջ, իսկ 2011 թվականին ստացել է ներկայիս անվանումը: Քոլեջը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, Կենտրոն թաղամաս 96 հասցեում:

Հաստատությունն անցնում է իր երկրորդ ինստիտուցիոնալ հավատարմագրումը: Նախորդ հավատարմագրման արդյունքում այն ստացել է երկու տարի պայմանական հավատարմագրում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

ԿՏՊՔ-ն հանդիսանում է տարածաշրջանային բազմագործառութային ուսումնական հաստատություն, որն առաջարկում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն: Նրա հիմնական դերը տարածաշրջանում արտահայտվում է որակյալ մասնագետների պատրաստմամբ, որոնք համապատասխանում են տեղական աշխատաշուկայի պահանջներին:

Հիմնական կրթական ծրագրերը ներառում են հետևյալ ոլորտները՝

- Տրանսպորտի կառավարում,
- Հաշվապահական հաշվառում,
- Ծրագրային ապահովում,
- Դիզայն,
- Զբոսաշրջային ծառայություններ (օտար լեզվի խորացված իմացությամբ),
- Գազային սարքավորումների տեխնիկական շահագործում,
- Բժշկական մասնագիտություններ (ատամնատեխնիկա, քույրական գործ, դեղագործություն):

Քոլեջը տրամադրում է լիցենզիոն տեղեր՝ վճարովի և անվճար հիմունքներով, ընդ որում, ուսանողների մոտ 50-60%-ը սովորում է անվճար:

- Ուսանողների ընդհանուր թիվը՝ շուրջ 800,
- Դասախոսական կազմ՝ շուրջ 70, այդ թվում՝
- Հիմնական աշխատողներ՝ 40,
- Համատեղողներ և գործատուներ՝ 30:

Քոլեջը համագործակցում է տեղական գործատուների հետ՝ ապահովելով ուսանողների պրակտիկան և հետագա զբաղվածությունը: Շրջանավարտների զբաղվածության ցուցանիշները գերազանցում են 75%-ը՝ կախված մասնագիտությունից:

Լրացուցիչ տեղեկատվություն, որն ազդում է ՄՈՒՀ-ի գործունեության վրա

2020 թվականին քոլեջին միացվել է Հրազդանի պետական բժշկական քոլեջը, ինչի արդյունքում կրթական ծրագրերի շրջանակն ընդլայնվել է բժշկական մասնագիտություններով:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և կրթական առաջարկները համահունչ են մարզի զարգացման ռազմավարությանը, որի առաջնահերթությունները ներառում են զբոսաշրջության, գյուղատնտեսության և տեխնոլոգիական ոլորտների զարգացումը:

Աղբյուրների հղումներ.

- ինքնավերլուծություն,
- ռազմավարական ծրագիր
- մարզի զարգացման ծրագիրը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջն ինստիտուցիոնալ հավատարմագրում է անցնում երկրորդ անգամ: Փորձագիտական խումբը գնահատելիս առաջնորդվել է այն հանգամանքով, որ քոլեջի առաքելությունն է՝ «ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան՝ զարգացնելով տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը, ապահովել կրթական ծառայությունների ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ, ստեղծել նպաստավոր պայմաններ արդյունավետ և որակյալ ուսուցման համար ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ, խթանել երկակի ուսուցման մոդելի ներդրմանը»:

Քոլեջի 2020-2025 թթ. ռազմավարական ծրագիրը ներառում է որակյալ կրթության, հանրային ներգրավվածության, ֆինանսական կայունության և այլ կարևոր ուղղությունների զարգացումը: Այն նաև սահմանում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները, որոնք ուղենիշ են դարձնում ռազմավարական ծրագրի նպատակները: Փորձագիտական խմբի վերլուծությունները ցույց տվեցին, որ քոլեջը չի իրականացրել որոշ պլանավորված գործողություններ, ինչպիսիք են՝ միջազգայնացմանն ուղղված քայլերը, էլեկտրոնային գրադարանի ստեղծումը, սակայն ռազմավարական ծրագրերի նպատակների մեծ մասը հասել է իր վերջնարդյունքին՝ բարելավելով բոլոր ոլորտները: Ռազմավարական ծրագրի կառուցվածքը թույլ է տալիս հետևողական պլանավորում՝ վերահսկելով ռիսկերի նվազեցումը, նպատակների իրականացման փուլերը, իսկ շահակիցների կարիքների բացահայտումը ևս հնարավորություն է ընձեռում մշակել առավել հասցեական ռազմավարական նպատակների իրականացում:

Քոլեջում առկա է կոլեգիալ և միանձնյա կառավարման համակարգ: Փորձագիտական խմբի գնահատմամբ կառավարման այս կառուցվածքի շնորհիվ որոշ ստորաբաժանումների դերերն ու կանոնակարգերն ավելի հստակեցվել են: Քոլեջի ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների միջոցով վերահսկվում է ստանձնված պարտավորությունների կատարման ընթացքը: Այնուամենայնիվ, քոլեջն անհրաժեշտություն ունի կառավարման խորհրդի ներգրավվածության ակտիվացման, որը հեռանկարում կբերի կառավարման խորհրդի դերի կարևորությանը ռազմավարական ուղղությունների, հիմնախնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված քայլերի նախանշման գործընթացների մեջ:

Քոլեջի որակի ապահովման ներքին համակարգը ներդրվել է 2015 թվականին, իսկ 2018-ից գործում է որակի ապահովման կենտրոնը: Հաշվետվությունների մշակման, գործառույթների գնահատման և պլանավորումների միջոցով կենտրոնը վերահսկում է առկա գործընթացները: Ուսումնական գործընթացներում ու կառավարման որոշումներում կատարված բարելավումները դրականորեն ազդել են հաստատության առաջընթացի վրա:

Քոլեջի իրականացրած կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, հիմնված են պետական չափորոշիչների վրա, ապահովում են որակավորումների արժանահավատ շնորհումը՝ հիմքում ունենալով մոդուլների վերջնարդյունքների ստուգումը, մասնագիտական համատեքստում ուսանողների առաջադրանքների և գնահատումների բազմազանությունը, պրակտիկ ոլորտի ներգրավված դասավանդողների մասնակցությունը, ինչպես նաև գործատուների ռեսուրսների օգտագործումը: Այս գործընթացները նպաստում են ուսանողների պրակտիկ կարողությունների ձեռքբերմանը և ստուգմանը, հատկապես, երբ առկա է համապատասխան մասնագիտական միջավայր: Քոլեջի հաջողություններից է «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դուալ կրթական ծրագրի հաջող իրականացումը՝ գործատուի ներգրավվածությամբ և պրակտիկ

աշխատանքի հնարավորություններով, ինչի շնորհիվ ուսանողները ծանոթանում են իրական աշխատանքային միջավայրին: Այնուամենայնիվ, ծրագրերի մշակման և բարելավման գործընթացներում ներդրված չեն բենչմարքինգի հստակ մեխանիզմներ, և անհրաժեշտություն է կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունը միջազգային մակարդակով՝ ապահովելով ուսանողների շարժունության գործընթացը:

Քոլեջը ծրագրել է բարելավել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի որակը, զարգացման նպատակներով առաջադրել նոր մեխանիզմներ և բարեփոխումներ: Դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է մրցույթների միջոցով, իսկ վերջերս քոլեջը կարողացել է ներգրավել նոր մասնագետներ՝ առանց մրցույթի, հիմնվելով մասնագիտական գործունեություն իրականացնող համապասխան ոլորտի մարդկային ներուժի վրա: Հաստատության դասախոսների մասնագիտական որակներն համապատասխանում են դասավանդվող առարկաներին, իսկ նրանց գնահատման համակարգը ներառում է հարցումներ, դասալսումներ և վերապատրաստումներ, իսկ դասախոսական կազմի կայունությունն ապահովելու համար պլանավորվում է երիտասարդ կադրերի մասնագիտական զարգացումը: Դասախոսական կազմը ներգրավված է մեթոդական վերապատրաստումներին և նորարարական մոտեցումների կիրառմանը միտված միջոցառումներին՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին նախաձեռնությունների արդյունքում: Այդուհանդերձ, վերապատրաստման համակարգի արդյունավետությունը դեռևս ամբողջությամբ չի իրացվել, և անհրաժեշտ է դրա ռազմավարական պլանավորումը՝ առավել նպատակային դարձնելու համար վերապատրաստումները, ինչպես նաև ընդլայնելու միջազգային համագործակցությունը՝ միջազգային փորձը ներդնելու և դասախոսների համար նոր հնարավորություններ ստեղծելու համար:

Քոլեջը նախորդ հավատագրումից հետո մեծ ուշադրության տակ է վերցրել ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող գործառույթները, որի արդյունքում մշակվել և ներդրվել է «ԿՏՊՔ ուսանողների հետազոտական աշխատանքների» ընթացակարգը: Բոլոր դասընթացներում կան հետազոտական առաջադրանքներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին կիրառել գիտելիքները վերլուծական խնդիրների լուծման համար: Քոլեջի դասավանդողները ներգրավված են մասնագիտական հետազոտություններում և հեղինակել են ձեռնարկներ: Սակայն ուսանողների առաջադրանքներում դեռևս գերակշռում են տեղեկատվության հավաքագրումը և վերարտադրությունը՝ առանց խորքային վերլուծության: Հեռանկարում քոլեջի ջանքերը պետք է ուղղված լինեն ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը իրենց մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում:

ԿՏՊՔ-ն մեծ ջանքեր է գործադրում ուսումնական միջավայրի բարելավման համար: 2020-2025թթ. ռազմավարական ծրագրում ենթակառուցվածքների և ռեսուրսների արդիականացումը հանդիսանում է առաջնային նպատակ, և ներկայումս քոլեջում առկա են ժամանակակից լսարաններ, լաբորատորիաներ, մարզադահլիճ և գործնական ուսուցման ռեսուրսներ, որոնք ապահովում են ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացումը: Միևնույն ժամանակ, Քոլեջը պետք է հետագայում մշակի և իրականացնի նոր ներդրումային մոդելներ՝ ֆինանսավորման և ռեսուրսների ավելացման նպատակով:

Հաստատությունն ապահովում է ուսանողների ընդունելության թափանցիկ գործընթացը, մշտապես ուսումնասիրում է նրանց կրթական կարիքները և ներգրավում ուսանողներին քոլեջի կառավարման գործընթացներում: Քոլեջում կարևորվում է նաև Կարիերայի կենտրոնի գործունեությունը, ինչը նպաստում է շրջանավարտների մրցունակության բարձրացմանը աշխատաշուկայում:

Քոլեջն ապահովում է տեղեկատվության թափանցիկությունը սոցիալական ցանցերի և պաշտոնական կայքի միջոցով, սակայն ստորաբաժանումների հաշվետվությունները հանրայնացված չեն, ինչը սահմանափակում է արտաքին շահակիցների տեղեկացվածությունը հաստատության գործընթացների վերաբերյալ: Հասարակության հետ կապի առումով անհրաժեշտություն կա զարգացնել հետադարձ կապի մեխանիզմները՝ սոցիալական մեդիայի արձագանքների և ուսանողական հարցումների միջոցով: Քոլեջը կազմակերպում է կրթական և սոցիալական միջոցառումներ, ուսանողներին ներգրավում է նաև կամավորական աշխատանքներում, ինչը նպաստում է նրանց մասնագիտական ու սոցիալական պատասխանատվության ձևավորմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման զարգացման նախաձեռնությունները, սակայն գտնում է, որ միջազգային համագործակցության

փորձի և հստակ քաղաքականության բացակայությունը խոչընդոտում են այս գործընթացը: Այս գործընթացի համակարգված մոտեցումը, որը կներառի պատասխանատու ստորաբաժանման կամ համակարգող անձի ներգրավումը, կբերի միջազգային կապերի արդյունավետ զարգացմանը: Բացի այդ, կարևոր է այլ քոլեջների հետ համագործակցության ակտիվացումը, ինչը կնպաստի ուսումնական ծրագրերի բարելավմանը և մասնագիտական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը: Անգլերեն լեզվի իմացության խնդիրը նույնպես խոչընդոտ է, և դրա լուծման համար անհրաժեշտ է մշակել հստակ ռազմավարություն, ինչպես նաև քոլեջի՝ LinkedIn-ում գրանցվելու և անգլերենով նյութեր հրապարակելու նախաձեռնությունը կարող է բարձրացնել նրա միջազգային տեսանելիությունը, որը սակայն լրացուցիչ ռեսուրսներ կպահանջի:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման արդյունավետ մեխանիզմների առկայությունը,
2. կառավարման համակարգում տվյալահենք որոշումների կայացումը,
3. «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությամբ դուալ կրթական ծրագրի հաջող իրականացումը,
4. դասախոսական կազմի զարգացմանն ուղղված գործընթացների առկայությունը,
5. կրթական միջավայրի անընդհատ բարելավումը,
6. գործատուների հետ համագործակցության շնորհիվ ռեսուրսների համատեղ կիրառումը և պրակտիկաների կազմակերպումը,
7. որակի ապահովման համակարգի ազդեցությունը բոլոր ոլորտներում բարելավումների շարունակական իրականացման վրա:

Հաստատության թույլ կողմերն են.

1. գնահատման առանցքային չափելի ցուցիչների բացակայությունը,
2. միջազգայնացմանն ուղղված գործընթացների պլանավորման պակասը և պատասխանատուների բացակայությունը,
3. կրթական ծրագրերի համեմատական վերլուծության բացակայությունը,
4. միջազգային համագործակցության միջոցով դասախոսական կազմի փորձի փոխանակման միջոցառումների պակասը,
5. օտար լեզվի իմացության բարձրացմանն ուղղված համակարգված միջոցառումների թույլ լինելը,
6. ֆինանսական մուտքերի ներգրավման սահմանափակ ուղղությունները,
7. դասախոսական կազմի՝ հետազոտական գործունեության խթանման մեխանիզմների ոչ համակարգված լինելը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Նոր ռազմավարական ծրագիրը մշակելիս հստակ սահմանել մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսները՝ ըստ ռազմավարական նպատակների, ինչպես նաև ներդնել ԳԱՑ-երի համակարգը:
2. Ուսումնասիրել չիրագործված գործողությունների պատճառները և նոր ծրագրում ներդնել հետևողական գնահատման և վերահսկման գործիքներ:
3. Ներդնել ֆինանսական աղբյուրների բազմազանեցման մեխանիզմներ՝ ապահովելու հաստատության զարգացման կայունությունը:

4. Որակի ապահովման գործընթացներում ֆորմալացնել արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ իրականացնելով գործատուների և շրջանավարտների լայն շրջանակի հետ հանդիպումներ և հարցումներ:
5. Շարունակել ամրապնդել որակի ապահովման մշակույթը՝ ապահովելով ստորաբաժանումների և աշխատակիցների ներգրավվածությունը որակի համակարգի գործունեության մեջ:

Որակավորումների արժանահավատ շնորհում

6. Անցկացնել համեմատական վերլուծություն տեղական և միջազգային ուսումնական հաստատությունների հետ՝ ապահովելով կրթական ծրագրերի համապատասխանությունը միջազգային չափանիշներին և լավագույն փորձի կիրառումը:
7. Բոլոր մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման գործընթացում ներառել գործնական հմտությունների ստուգում, ինչը կերաշխավորի ուսանողների գործնական պատրաստվածության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության բարձր մակարդակ:
8. Մշակել և ներդնել գնահատման հստակ չափանիշներ բոլոր մասնագիտությունների համար՝ ապահովելով ուսումնառության վերջնարդյունքների ամբողջական և ճշգրիտ չափումը:
9. Իրականացնել մասնագիտական վերապատրաստումների ռազմավարական պլանավորում՝ ապահովելով բոլոր մասնագետների կարողությունների զարգացումը:
10. Ներդնել «Երիտասարդ դասախոսների զարգացման ծրագիր», որը կներառի սկսնակ դասախոսների մենթորություն փորձառու մասնագետների կողմից, դասավանդման մեթոդաբանության դասընթացներ և ինքնագնահատման մեխանիզմներ՝ շարունակական զարգացման համար:
11. Ընդլայնել միջազգային համագործակցության շրջանակները միջազգային ծրագրերի միջոցով, ինչը թույլ կտա դասախոսներին կիրառել նոր մեթոդներ, ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը:
12. Բազմազանեցնել այլընտրանքային մուտքերը բյուջեում՝ քոլեջի ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման և հաստատության կայուն զարգացման նպատակով:
13. Դիտարկել մասնագիտական ռեսուրսների ձեռքբերման հնարավորությունը միջազգային ծրագրերի և դրամաշնորհների մասնակցության միջոցով:
14. Ներդնել էլեկտրոնային գրադարան:
15. Ներդնել փաստաթղթաշրջանառության միասնական էլեկտրոնային համակարգ:

Երկարաժամկետ զարգացում

16. Ներդնել շրջանավարտների հետագծի երկարաժամկետ կտրվածքով ուսումնասիրման մեխանիզմներ՝ ավելի դինամիկ գնահատելու մասնագիտությունների պահանջարկն աշխատաշուկայում:
17. Վերանայել և բարելավել հետազոտական աշխատանքների մեթոդաբանությունը՝ ապահովելով, որ ուսանողները ոչ միայն տեղեկատվություն հավաքագրեն, այլև կարողանան վերլուծել, համեմատել և առաջարկել գործնական լուծումներ:
18. Մեծացնել դասախոսների հետազոտական գործունեության ներգրավվածությունը՝ խրախուսելով նրանց մասնակցել միջազգային գիտաժողովների, հրապարակել հետազոտություններ և ներգրավել ուսանողներին գիտական նախագծերում:
19. Կազմակերպել հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման հարթակներ, որտեղ ուսանողները կկարողանան ներկայացնել իրենց հետազոտությունները, փորձարկել գիտական մոտեցումները և ստանալ կառուցողական արձագանք մասնագետներից:

20. Բազմազանեցնել հետազոտական աշխատանքները՝ խթանելով միջառարկայական հետազոտությունները դասախոսների և ուսանողների մասնակցությամբ:
21. Ապահովել հասարակությանը մատուցվող ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը կայքի միջոցով, ինչպես նաև ապահովել օտար լեզվով կայքի գործարկումը:
22. Համակարգել գիտելիքի փոխանցման մեխանիզմները՝ դրանց արդյունավետության բարձրացման նպատակով:
23. Ապահովել, որ ստորաբաժանումների բոլոր հաշվետվությունները ներառեն վերլուծական բաղադրիչ և SWOT վերլուծություն՝ հիմնված տվյալների վրա:
24. Մշակել և ներդնել արտաքին կապերի և միջազգայնացման հստակ ռազմավարություն, որը կներառի համագործակցության ուղղությունները, գործընկերային կապերի հաստատման մեխանիզմները, միջազգային ծրագրերում ներգրավվածության գործողությունների պլանը և օտար լեզվի իմացության բարելավման նախաձեռնությունները:
25. Նշանակել պատասխանատու անձ, որը համակարգված ձևով կղեկավարի միջազգային համագործակցությունները:
26. Քայլեր ձեռնարկել ներքին շահակիցների՝ անգլերենի իմացության մակարդակի բարձրացման համար:
27. Դիտարկել Erasmus+ կարողությունների զարգացման ծրագրերին դիմելու հնարավորությունները՝ ապահովելով նաև այլընտրանքային եկամուտների ներգրավումը:
28. Ակտիվացնել այլ քոլեջների հետ կապերը՝ փորձի փոխանակման, կրթական ծրագրերի համադրման նպատակով:

_____

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

21-ը փետրվարի, 2025 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Հերմինե Գրիգորյան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:

Գոհար Մկրտչյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայկական բժշկական ինստիտուտի Կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ:

Աիդա Դաբաղյան՝ Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի կրթության որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:

Արեգ Խալափյան՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար **Վարդուհի Գյուլազյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 2024 թվականի թետրվարի 01-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 2024 թվականի հունիսի 10-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև

համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

2024 թվականի դեկտոմբերի 09–ին առցանց հանդիպում է տեղի ունեցել Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը (հանդիսանում է նաև գործընթացի համակարգողը), փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. դեկտեմբերի 16-18-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը մեկնարկել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, դուալ ուսուցման կազմակերպման, ռեսուրսների դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված և ՈԱԱԿ-ի կողմից ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը փորձագիտական խմբի հաստատումից հետո տրամադրվել է քոլեջին: Քոլեջի կողմից նախնական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 21.02.2025թ. և տրամադրվել քոլեջին:



Վարդուհի Գյուլազյան
Փորձագիտական խմբի համակարգող

21-ը փետրվարի, 2025 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Քոլեջն առաջնորդվում է 2020-2025թթ. Ռազմավարական ծրագրով: Քոլեջի առաքելությունն է՝ «ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան՝ զարգացնելով տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը, ապահովել կրթական ծառայությունների ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ, ստեղծել նպաստավոր պայմաններ արդյունավետ և որակյալ ուսուցման համար ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ, խթանել երկակի ուսուցման մոդելի ներդրմանը»: Նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը հստակեցրել է իր տեսլականը, առաքելությունն ու առաջնահերթությունները՝ համապատասխանեցնելով Քոլեջի առանձնահատկություններին:

ՌԾ-ով սահմանված են Քոլեջի 6 հիմնարար արժեքները, 5 ռազմավարական նպատակները, նպատակների իրագործման համար նախատեսվող 37 գործողությունները:

Քոլեջի ռազմավարական նպատակներն են որակյալ կրթությունը, հանրային ներգրավվածությունը, որակյալ մարդկային ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, ֆինանսական կայունությունը, արդյունավետ կառավարումը, արտաքին կապերն ու միջազգայնացումը: Հետազոտությունների իրականացումը որպես ռազմավարական հիմնախնդիր սահմանված չէ: Սակայն, համաձայն գործողությունների պլան ժամանակացույցի, որակյալ կրթություն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսների և ուսանողների խրախուսում: Արտաքին կապեր և միջազգայնացում ուղղության շրջանակներում պլանավորվող գործողությունները հիմնականում վերաբերում են Քոլեջի մասին տեղեկատվության տարածմանը՝ ներդրողներ ներգրավելու ակնկալիքով: Տեղական կազմակերպությունների հետ արտաքին կապերի հաստատման մասով առաջնահերթություններ սահմանված չեն:

ՌԾ նպատակների իրականացման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են իրականացվելիք միջոցառումները, գործողությունները, ժամկետները, ակնկալվող արդյունքը, արդյունքների վերահսկման ձևերը, ֆինանսական միջոցները, ռիսկերը, պատասխանատուները: Առկա է նաև ռիսկերի նվազեցման գործողությունների պլան: Պլան-ժամանակացույցում ժամկետային պլանավորումները բոլոր գործողությունների համար նախատեսված է 2020-2025 թվականներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՌԾ-ում սահմանված գործընթացների մեծ մասին Քոլեջը կարողացել է հասնել, մասնավորապես՝ ռեսուրսների համալրում, որակյալ կրթության համար գործատուների հետ սերտ համագործակցություն և այլն: Միևնույն ժամանակ առկա են գործողություններ, որոնք դեռևս չեն կատարվել, մասնավորապես չի կատարվել էլեկտրոնային գրադարանի ստեղծումը, ինչպես նաև միջազգայնացմանն ուղղված որոշակի քայլեր. օտար լեզուների իմացության բարելավում, միջազգային ծրագրերում ներգրավվածություն և այլն:

Ըստ ինքնավերլուծության Քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, աշխատակիցները, իսկ արտաքին շահակիցներն են համայնքը, ծնողները, գործատուները, սոցգործընկերները և բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր հետաքրքրված են քոլեջի գործունեությամբ:

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման ուղղությամբ քոլեջը դեռևս 2018 թվականից ձեռնամուխ է եղել ստեղծելու որոշակի գործիքակազմ (հարցումներ, քննարկումներ), որը հետագայում վերանայվել է և կատարելագործվել: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի արտաքին և ներքին շահակիցները կիսում են քոլեջի առաքելությունը, ինչպես նաև քոլեջի նպատակները արտահայտում են շահակիցների կարիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի շահակիցները նշում են պրակտիկ կրթությունը որպես առաջնահերթություն, ինչն արտահայտված է նաև առաքելության մեջ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հաջորդ ռազմավարական ծրագրում նախատեսվում է հետևյալ ուղղությունների զարգացում. դրամաշնորհային ծրագրերին մասնակցություն, ձեռնարկատիրական գործունեության զարգացում՝ կարճաժամկետ ծրագրերի ձևաչափով, դասախոսների մասնագիտական վերապատրաստումների ընդլայնում, դասախոսների գնահատման (ռեյտինգավորման) համակարգի ներդրում, որը նախատեսված է աշխատավարձերի տարբերակվածությունն ապահովելու համար, կրթական ծրագրերի օպտիմալացում, մասնավորապես որոշ մասնագիտությունների վերանայում՝ ըստ աշխատաշուկայի պահանջների: Օրինակ՝ «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտությունը նախատեսվում է փոխարինել «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությամբ: Այս ուղղությունները Քոլեջը դուրս է բերել ներքին և արտաքին շահակիցների հետ քննարկումների արդյունքում:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Քոլեջում ՌԾ գնահատման մեխանիզմներ են հանդիսանում ստորաբաժանումների հաշվետվությունները, որոնք տնօրենն ամփոփում է իր տարեկան հաշվետվության մեջ: Հաշվետվությունները հիմնականում փոխկապակցված են ՌԾ նպատակների հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջը բարելավել է իր ռազմավարական մոտեցումները և հստակացրել է առաքելությունն ու նպատակները՝ դարձնելով դրանք առավել հասցեական և Քոլեջի առանձնահատկություններին համահունչ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ այս գործընթացները նպաստել են բոլոր ոլորտների առաջընթացին: Ռազմավարական ծրագրի կառուցվածքը վկայում է հետևողական պլանավորման մասին, որտեղ ռիսկերի նվազեցման մեխանիզմների առկայությունը և պատասխանատուների հստակեցումը ապահովում են կառավարման երկարաժամկետ կայունություն և նպաստում հաստատության զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը սահմանել է արդյունավետ մեխանիզմներ շահակիցների կարիքների գնահատման համար: Այդ մեխանիզմների շնորհիվ Քոլեջը կարողացել է նախանշել առաջիկա հինգ տարիների առաջնահերթությունները, որոնք ներդաշնակ են ներքին, ինչպես նաև արտաքին շահակիցների պահանջներին: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է, որ նոր ռազմավարական ծրագիրը մշակելիս Քոլեջը հաշվի առնի պլանավորված գործողությունների իրատեսականությունը, հատկապես մարդկային ու ֆինանսական ռեսուրսների տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ռազմավարական ծրագրի գնահատման մեխանիզմները արձանագրում են նպատակների մասով առաջընթացը, նպաստելով Քոլեջի զարգացման շարունակականությանը և ռազմավարական ուղղությունների ճշգրտմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման ցուցիչների սահմանումը թույլ կտա վերահսկել ռազմավարական նպատակների իրականացման ընթացքը, հավաքագրել հստակ տվյալներ արդյունքների ընթացիկ վերլուծության միջոցով և նպաստել հաշվետվողականության ու պլանավորման գործընթացների շարունակական զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի հստակ սահմանված առաքելություն և նպատակներ, նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել է ռազմավարական պլանավորման գործընթացները, առկա է պլան-ժամանակացույց, ՌԾ-ի արդյունավետությունը գնահատող որոշակի մեխանիզմներ, ներքին և արտաքին շահակիցների կարիքները հաշվի են առնվում ՌԾ պլանավորման գործընթացում, փորձագիտական խումբը գտնում է, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների համադրմամբ: Քոլեջի կառավարման բարձրագույն մարմինը Կառավարման խորհուրդն (բաղկացած 12 անդամներից) է, իսկ քոլեջի կառավարման գործադիր մարմինը տնօրենն է, ով ընտրվում է կառավարման խորհրդում: Քոլեջն ունի նաև Մանկավարժական խորհուրդ, որտեղ ընդգրկված են բոլոր դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները:

Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը վերանայել է իր կառուցվածքը: Նոր կառուցվածքում Քոլեջը չի նախատեսել Տնօրենական խորհուրդ, քանի որ ըստ քոլեջի տնօրենության այդ խորհրդի գործառույթների մեծ մասը իրականացնում են կառավարման, մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդները: Կազմակերպական կառուցվածքում ավելացել է Կուրսղեկների խորհուրդը, որի գործառույթներն ամրագրված են համապատասխան կանոնակարգում: Ըստ կանոնակարգի՝ Կուրսղեկների խորհուրդը քոլեջի կոլեգիալ ղեկավարման մարմին է, որը նպաստում է ԿՏՊՔ-ում տարվող ուսումնական, կազմակերպչական, դաստիարակչական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

Քոլեջի 2020-2025թթ. ՌԾ-ի չորրորդ՝ ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում նպատակում որպես նախատեսվող գործողություն է նշվում՝ «ինքնարժեքի վերլուծության հիման վրա ձևավորել ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսման վարձի հաշվարկի մեթոդաբանություն՝ առաջնորդվելով մասնագիտության տնտեսական նպատակահարմարության, անհրաժեշտ եկամտաբերության և մրցունակության նկատառումներով»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս մասով քոլեջը դեռևս աշխատանքներ չի իրականացրել: Քոլեջը քայլեր է ձեռնարկել ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ, մասնավորապես նախաձեռնել է կարճաժամկետ ծրագրերի իրականացում և այլն: Միևնույն ժամանակ դեռևս մարտահրավեր է մնում ֆինանսական երկարաժամկետ կայունությունը:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ՌԾ պլան-ժամանակացույցում որոշ ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար տրամադրվել են պահանջվող կոնկրետ ֆինանսական միջոցներ (օրինակ՝ համակարգիչների և մուլտիմեդիաների ձեռքբերում, ջերմոցի կառուցում, արևային կայանի տեղադրում):

Ֆինանսների բաշխումը քոլեջում իրականացնում է տարեկան պլանավորմամբ: 2024թ. նախահաշվի նախագծի համաձայն՝ ծախսերի հիմնական ուղղությունը՝ աշխատակիցների աշխատավարձերը, կազմել է 70,8%, որը 2021թ. բյուջեում եղել է 84%, այսինքն աշխատավարձերի չափաբաժինը բյուջեում նվազել է, իսկ գույքի համար տրամադրվել է ծախսերի մոտ 10%, ինչպես նաև ուսումնական նյութերի համար՝ 1,1%՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած պահանջագրերը և այլ ծախսեր:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի դիտարկումից և փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների միջև առկա են հորիզոնական և ուղղահայաց կապերը: Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է կանոնակարգերով, ինչպես նաև յուրաքանչյուր պաշտոնի համար առկա է պաշտոնի անձնագիր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Հասարակայնության հետ կապերի պատասխանատուն կատարում է Դուալ ծրագրի ղեկավարի գործառույթը՝ պայմանավորված հիմնական աշխատակցի ֆիզիոլոգիական արձակուրդում գտնվելու հանգամանքով: Նման այլ դեպքեր առկա չեն:

Դասախոսական, ուսանողական համակազմերը ընդգրկված են կառավարման, մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կառավարման խորհրդում ներգրավված ուսանողները ակտիվ են կարիքների վերհանման հարցում (օրինակ՝ բարձրաձայնվել են դասերի տևողության, ջեռուցման և ռեսուրսների բարելավման հարցերը): Նշված խնդիրներից լուծվել են ջեռուցման և ռեսուրսների համալրման խնդիրները: Իսկ դասախոսները հիմնականում իրենց կարիքները բարձրացնում են մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդներում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կառավարման խորհուրդը հիմնականում քննարկում և հաստատում է քոլեջի տարեկան նախահաշիվը, տնօրենի հաշվետվությունը, սակայն Քոլեջի խնդիրների առաջադրման հարցում նախաձեռնողականություն չի ցուցաբերում:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ նույն բաժնի տարբեր տարիների գործողությունները հիմնականում կրկնվում են:

Տնօրենի տարեկան պլանավորումը կատարվում է ըստ ՌԾ նպատակների, իսկ տարեկան հաշվետվությունների վերջում տրվում է ՌԾ-ի պլան-ժամանակացույցի տվյալ ուստարվա ընթացքում իրականացրած աշխատանքների ցանկը: Օրինակ՝ 2022-2023 ուստարում ներդրվել է հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հաստիք՝ ըստ ռազմավարական նպատակ 2.1: Ինքնավերլուծության մեջ տրված է 2020 թվականից սկսած կատարված աշխատանքների ցանկն ամբողջությամբ, ինչպես նաև դեռ չկատարված գործողություններ (էլեկտրոնային գրադարանի ստեղծում, գրանտային ծրագրերի իրականացում և այլն): Ընդհանուր առմամբ աշխատանքային պլաններում սահմանված վերջնարդյունքները չափելի չեն, օրինակ՝ բժշկական մասնագիտությունների գծով բաժնի վարիչի 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանում գործընթացների իրականացման ցուցիչները հիմնականում բացակայում են կամ նշված ցուցիչը՝ որակյալ կադրերի պատրաստումը, չափելի չէ:

Քոլեջը վերահսկում և մշտադիտարկում է ստորաբաժանումների գործունեությունը հաշվետվությունների միջոցով: 2021-2022 ուստարվանից, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման շրջանակներում ստացված խորհրդատվությունները, ԿՏՊՔ-ում ներդրվել է տարեկան աշխատանքների և հաշվետվությունների միասնական ձևաչափ, որտեղ պարտադիր ընդգրկվում են SWOT վերլուծություններ: 2023 թվականին մշակվել և գործարկվել է «ԿՏՊՔ-ի ամբիոնների աշխատանքների գնահատման ընթացակարգը», որի շրջանակներում սահմանվում են ամբիոնների տարեկան գործունեության գնահատման նպատակներն ու չափանիշները՝ հիմնված որակի կառավարման սկզբունքների վրա:

Ամբիոնների աշխատանքի գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ավարտին՝ հիմք ընդունելով միասնական ձևաչափը: Արդյունքները քննարկվում են նիստերի ընթացքում:

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը տեղի է ունենում ընթացիկ տվյալների հավաքագրմամբ և դրանց վերլուծությամբ: Հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ Քոլեջի ղեկավար կազմը կարևորում է որոշումների կայացումը տվյալահենք մոտեցմամբ և առաջիկայում նախատեսում է ՄԿԾ-ների օպտիմալացում, որոշ կրթական ծրագրերում Դուալ համակարգի փորձի ներդրում ու կարգապահական կանոնների խստացում: Այս բարելավումների իրականացման հիմքում ընկած են որակի կենտրոնի կողմից հարցումների և հանդիպումների միջոցով հավաքագրված տվյալները:

Քոլեջը ՈԱԿ-ի հարցումների միջոցով իրականացնում է ներքին խնդիրների վերհանում, օրինակ՝ իրականացվել են հարցումներ ներքին շահակիցների կարիքների գնահատման համար. հարցումներ և վերլուծություններ առաջին կուրսերի ուսանողների համար, ուսանողների բավարարվածության գնահատում պրակտիկաներից, դուալ պարապմունքներից, ռեսուրսներից, դասախոսների դասավանդումից, շրջանավարտների բավարարվածության գնահատում կրթությունից, դասավանդողների բավարարվածության գնահատում կառավարչական գործընթացներից, ռեսուրսներից, միջավայրից և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս հարցումների արդյունքում փոփոխվել են դասալսումների ընթացակարգը և հարցաթերթիկները, ներդրվել է կարիքների գնահատման ձևաչափ և այլն:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է աշխատաշուկայի և արտաքին շահակիցների հետ համագործակցության և հետադարձ կապ ապահովելու միջոցով: Օրինակ՝ «Ջերմատնային տնտեսություն» կամ «Մեխատրոնիկա» կրթական ծրագրերի իրականացման ընտրությունը կատարվել է Միասնական սոցիալական ծառայության տրամադրած տվյալների հիման վրա, ըստ որի ընտրվել է «Ջերմատնային տնտեսություն» կրթական ծրագիրը՝ տարածաշրջանում որպես հեռանկար ունեցող մասնագիտություն:

Քոլեջը փորձ է կատարել բոլոր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ շրջափուլը, օրինակ՝ ներքին կարգապահական կանոնակարգը, դասալսումների կարգը, որակի կենտրոնի կանոնակարգը անցել են բարելավման երկրորդ շրջափուլ:

Քոլեջն ունի պաշտոնական կայքէջ, ֆեյսբուքյան էջ և Ինստագրամյան էջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, սակայն մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում իրականացվում է քոլեջի պաշտոնական կայքէջում, ընդունելության արդյունքների, ուսման վճարի և տևողության վերաբերյալ տվյալներով, քոլեջի գործունեության վերաբերյալ կանոնակարգերով: Սակայն կայքէջում բացակայում են տնօրենի, ստորաբաժանումների հաշվետվությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը կատարել է կառավարման կառուցվածքային փոփոխություններ՝ վերանայելով կազմակերպական կառուցվածքը և ուժեղացնելով որոշ ստորաբաժանումների դերը: Այս փոփոխությունները նպաստում են կառավարման մարմինների գործառույթների հստակեցմանը և ուսումնական գործընթացի ավելի համակարգված կազմակերպմանը:

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևոր է համարում Կառավարման խորհրդի աշխատանքների ակտիվացման անհրաժեշտությունը՝ Քոլեջի զարգացման համար ռազմավարական ուղղություններ նախանշելու, հիմնախնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված քննարկումների խթանման առումով: Խորհրդի ներգրավվածության մեծացումը կարող է ապահովել ավելի համակարգված մոտեցում Քոլեջի կառավարմանը, ինչպես նաև նպաստել որոշումների կայացման գործընթացում շահակիցների լայն ընդգրկվածությանը:

Բարելավվել է պլանավորման գործընթացը՝ ապահովելով ռազմավարական և ընթացիկ պլանավորման տարանջատումը: Քոլեջի ռազմավարական պլանավորումն ունի հստակ ձևակերպված նպատակներ և դրանց իրագործման համար նախատեսված գործողությունների ծրագիր, ինչը վկայում է կառավարման համակարգի երկարաժամկետ զարգացման ուղղվածության մասին: Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ Քոլեջը դիտարկի տարեկան պլանների բարելավման իրականացումը՝ դրանք դարձնելով չափելի գործողություններով և արդյունքներով, որոնք կնպաստեն ռազմավարական պլանավորման առավել արդյունավետ իրագործմանը:

Ֆինանսական կառավարման տեսանկյունից առկա են դրական տեղաշարժեր, մասնավորապես՝ ավելի հավասարակշռված բաշխում է կատարվում ֆինանսական ռեսուրսների ներքին պլանավորման շրջանակում: Միաժամանակ, որոշ ռազմավարական նպատակներ, որոնք կարևոր են ֆինանսական կայունության ապահովման համար, դեռևս լիարժեք չեն իրականացվել, օրինակ՝ ուսման վարձի հաշվարկման մեթոդաբանության մշակում: Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական կայունությանն ուղղված մեխանիզմների ներդրումը կհանգեցնի կանխատեսելիության բարձրացմանը և ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Ներքին մշտադիտարկման և հաշվետվողականության բարելավումը ևս զգալի առաջընթաց է: Հաշվետվությունների և վերլուծությունների միասնական ձևաչափի ներդրումը թույլ է տալիս առավել արդյունավետ վերահսկել ուսումնական գործընթացները, բարձրացնել հաշվետվողականության մակարդակը և օբյեկտիվ գնահատել կատարված աշխատանքը:

Դրական է, որ Քոլեջը սկսել է որոշ գործընթացներում ներդնել որակի կառավարման շրջափուլային մոտեցում, ինչը վկայում է ինստիտուցիոնալ բարելավման շարունակականության մասին:

Քոլեջի ղեկավար կազմի կողմից տվյալահենք որոշումների կայացման կարևորումը և որակի ապահովման համակարգին ցուցաբերվող վստահությունը նպաստել են կառավարման գործընթացների բարելավմանը, ռազմավարական պլանավորման արդյունավետության բարձրացմանը և կրթական ծրագրերի շարունակական զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո իրականացվել են բարելավումներ հաշվետվողականության և տեղեկատվության տարածման հետ կապված, ներքին և արտաքին շահակիցների կարիքները դրվում են կառավարչական որոշումների կայացման հիմքում, քաղաքականության և վարչարարության գործընթացները իրականացվում են ՊԻԳԲ շրջափուլով, ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը և համագործակցությունը լավ է գործում, պլանավորումը բարելավվել է, ՄԿԾ-ների վերաբերյալ տվյալները վերլուծվում են և դրա հիման վրա իրականացվում են բարելավումներ, կատարվում են արտաքին գործոնների ուսումնասիրություններ, լավարկվել է քոլեջի գործընթացների կանոնակարգվածությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է ընդունելություն 9-ամյա և 12-ամյա կրթության հիմքով: Քոլեջում այժմ իրականացվում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական 10 կրթական ծրագիր ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Հաշվապահական հաշվառում », «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Դիզայն», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Ջերմատնային տնտեսություն», «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» (նախնական մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան) և «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն»:

Քոլեջն ունի ևս մեկ մասնագիտություն իրականացնելու թույլտվություն՝ « Մանկաբարձական գործ», որով վերջին 4 տարիների ընթացքում ընդունելություն չի իրականացվել՝ դիմորդների բացակայության պատճառով:

Համագործակցելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության GIZ կազմակերպության և գործընկեր կազմակերպությունների հետ՝ 2019 թվականից «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունն իրականացվում է դուալ կրթաձևով: Երրորդ կուրսից սկսած՝ յուրաքանչյուր երկուշաբթի և ուրբաթ օրերը ուսանողները գործնական ուսուցում են անցնում Ծաղկաձորի «Մարրիոթ», «Ավրորա», «Այպինա» և «Էյթի Էյթ» հյուրանոցներում, մասնակցում են հաճախորդների սպասարկման ողջ գործընթացին: Հաշվի առնելով տարածաշրջանի կարիքները և գործատուների առաջարկները՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» կրթական ծրագրում առավելություն է տրվել հյուրանոցային սպասարկմանը վերաբերող մոդուլներին:

Փորձագիտական այցից պարզվեց, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջում կատարվել են ՄԿԾ-ների բարելավումներ: Օրինակ՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմոտացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության պրակտիկայի ծրագրում ավելացվել է Python ծրագիրը, «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրում իրականացվել է «Տնտեսագիտություն» և «Կիրառական տնտեսագիտություն» առարկաների միավորում:

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից՝ Քոլեջում դասավանդվում են նաև առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին: Օրինակ՝ «Դիզայն» մասնագիտության կրթական ծրագրում ներդրված «Զարդարվեստ» ընտրովի առարկայի ժամերի մի մասը հատկացվել է նոր ժամանակակից ծրագրերի ուսուցանմանը, «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության կրթական ծրագրում որպես ընտրովի առարկա դասավանդվում է «Էլեկտրոմոբիլներ և ավտոսերվիսային ծառայություններ» մոդուլը: «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագրում ընտրովի առարկա է «Դիետոլոգիան»: «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության կրթական ծրագրում պահուստային ժամերից տրամադրվել է ռուսաց լեզվին: Այս փոփոխությունները կատարվել են՝ հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական (տեսական ուսուցմամբ և առանց տեսական ուսուցման) արտադրական և նախաավարտական: Երկրորդ կուրսում «Ատամնատեխնիկական գործ» և «Քույրական գործ» մասնագիտությունների ուսանողները ունեն 4 շաբաթ ուսումնական պրակտիկա, իսկ երրորդ կուրսում՝ 4 շաբաթ ուսումնական և 3 շաբաթ նախաավարտական պրակտիկա: «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողները հատուկ և ընդհանուր մասնագիտական մոդուլների ժամերի մոտ 40 տոկոսն անցկացնում են գործատուների մոտ:

Դուալ կրթական ծրագրի պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այնտեղ նշվում է արդյունքի անվանումը՝ ըստ աշխատանքի տեսակի, ձեռք բերված հմտությունները (գիտի/կարող է), գործնական ուսուցման ծրագրի կատարողականի համապատասխանությունը ուսումնառության վերջնարդյունքներին (%-ով), ուսանողի կողմից կատարվում է օրագրի վարման ինքնագնահատում: Դուալի օրագրում առկա են գնահատման միավորային և բնութագրական տեսակները: Օրինակ՝ կատարված աշխատանքների որակը գնահատվում է «գերազանց», «լավ», «բավարար», մասնագիտական հմտությունները ստանում են բնութագրական գնահատում, իսկ լեզուների իմացությունը՝ միավորային: Իսկ ոչ դուալ ձևաչափով իրականացվող մասնագիտությունների պրակտիկայի օրագրերում առկա է կատարված աշխատանքների հիմնական բնութագիրը: Պրակտիկաների ժամանակ ուսանողների գնահատումն իրականացվում է պրակտիկայի ղեկավարների կողմից:

Ըստ Ինքնավերլուծության՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն քոլեջում առկա չէ, քանի որ յուրաքանչյուր դասախոս ունի իր դասավանդման մոտեցումը: Դասալսումները ցույց տվեցին, որ դասավանդողները կիրառում են ինտերակտիվ մեթոդներ, ինչպիսիք են մտագրոհը, քառաբաժանը, խմբային աշխատանքը, Վեննի դիագրամը և այլն: «Քույրական գործը վիրաբուժությունում, թերապիայում, մանկաբուժությունում, մանկաբարձությունում և գինեկոլոգիայում», ինչպես նաև այլ հատուկ մասնագիտական մոդուլներից դասախոսները առաջադրում են տարբեր ինքնաստուգման հարցեր, հանձնարարում են կազմել մասնագիտական բառարաններ, խաչբառեր, կատարել թարգմանություններ լատիներենից հայերեն և հակառակը, առաջադրում իրավիճակային խնդիրներ: «Քույրական գործ» մասնագիտության «Պացիենտի կրթում» մոդուլի շրջանակներում ուսանողներն իրականացնում են դերային խաղեր կոնֆիկտների կառավարման հմտությունների ձևավորման համար: «Քույրական գործ» մասնագիտության շրջանակներում որոշ մոդուլներ իրականացվում են «Հրազդան ԲԿ»-ում, որի ժամանակ ուսանողները հնարավորություն ունեն տեսնելու իրական դեպքեր, բժիշկ-դասախոսների հետ քննարկելու դեպքերը: «Հրազդան ԲԿ»-ի համապատասխան լսարանում առկա են ցուցապաստառներ, որոնք կիրառվում են դասերի ընթացքում: ԲԿ-ի ղեկավարության համաձայնությամբ ուսանողները ցանկության դեպքում հնարավորություն ունեն իրականացնելու գիշերային հերթապահություն ԲԿ-ի տարբեր բաժանմունքներում և շտապ օգնությունում:

«Դեղագործություն» մասնագիտության ուսանողները պատրաստում են թուրմեր դասընթացի շրջանակներում: Անհրաժեշտ բոլոր միջոցները տրամադրում է քոլեջը: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները գործնական առաջադրանք են կատարում՝ մոմից պատրաստելով պսակներ, իսկ բազայում անցկացվող պրակտիկայի ընթացքում արդեն պատրաստված ատամները տեղադրում են պրոթեզի վրա: «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողներին, օրինակ, կարող է հանձնարարվել գործատուի մոտ ուսումնասիրել «Դժվար» հաճախորդների հետ շփման առանձնահատկությունները: Դուալ ծրագրի շրջանակներում ուսանողները հյուրանոցներում ուսումնասիրում են հյուրանոցային բոլոր ծառայությունների (անվտանգություն, մաքրության, խոհանոց) ստանդարտները և դրանք կիրառում պրակտիկ գործընթացներում:

Քոլեջում 2020 թվականից գործում է «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» վերանայված կանոնակարգը, որտեղ սահմանված են գիտելիքների գնահատման չափանիշներ: Սակայն Կանոնակարգում առավելապես ներկայացվում է գնահատման ընթացակարգը, իսկ չափանիշները հստակեցված չեն, օրինակ՝ գնահատման չափանիշների տակ գրված է, որ քննական առարկաների համար նախատեսվում է քննություն կամ՝ 2 և ավելի անբավարար գնահատական ունեցող ուսանողների համար կազմակերպվում է պարտքերի մարման քննաշրջան: Հստակ սահմանված չէ, թե ինչպես է ձևավորվում հմտությունների միավորային գնահատումը: Մոդուլային ծրագրերում առկա են յուրաքանչյուր արդյունքի գնահատման միջոցները: Դրանք հիմնականում հարց ու պատասխաններ են, գործնական առաջադրանքներ, իրավիճակային հարցեր, թեստային առաջադրանքներ: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար մոտեցումները տարբեր են: Օրինակ՝ «Կատարել հյուրանոցային ծառայությունների կազմակերպան ոլորտում կիրառվող թեմատիկ նյութի արտասանվածքի վերլուծություն» արդյունքի ամփոփման գնահատման թերթիկը ներառում է թեստային աշխատանք (ուղղագրություն, կետադրություն, հնչյունափոխություն): Թեև արդյունքը ենթադրում է վերլուծություն, առաջադրանքները ենթադրում են գործողություններ: «Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով» մոդուլի «Տիրապետել սահմանված բառապաշարին և նկարագրել իրեն հետաքրքրող ընդարձակ թեմաներ» արդյունքի գնահատման թերթիկում հստակ ձևակերպված առաջադրանքներ չկան: Մինչդեռ «Ղեկավարման հմտություն և

սպասարկման էթիկետ» մոդուլի շրջանակում կիրառվող գնահատման թերթիկները ներառում են քեյսերի վերլուծություններ, համեմատություններ:

Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջիններում առկա են ինչպես տեսական հարցեր, այնպես էլ իրավիճակային խնդիրներ: Օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողներին հանձնարարվում է ստեղծել անիմացիոն ծրագրի գովազդ, կատարել եռալեզու թարգմանություն: «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ի ավարտական քննության հարցատոմսերը ներառում են ինչպես տեսական, այնպես էլ իրավիճակային խնդիրներ: «Քույրական գործ» ՄԿԾ-ի ավարտական քննության հարցատոմսերը նույնպես ներառում են իրավիճակային խնդիրներ:

Հարկ է նշել, որ «Դիզայն» մասնագիտության ուսանողները որպես ավարտական քննություն ներկայացնում են դիպլոմային նախագիծ:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ կարող են փոխել իրենց գնահատականը տեղում, սակայն գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Ինչ վերաբերում է ՄԿԾ-ների բենչմարքինգին, ապա քոլեջը չունի հատուկ մշակած քաղաքականություն, այս ուղղությամբ գործընթացները Քոլեջը դիտարկում է որպես հնարավորություն: Սակայն 2019 թվականին դուալ կրթական ծրագրի իրականացման ընթացքում ծրագիրը կազմողները այն համեմատել են նույն ժամանակահատվածում ներդրված Երևանի թիվ 2 տարածաշրջանային պետական քոլեջի և Երևանի պետական հումանիտար քոլեջի նմանատիպ դուալ ծրագրերի հետ, որի արդյունքում առաջարկվել է ծրագրում կատարել որոշակի փոփոխություններ: Մասնավորապես՝ որոշվել է, թե որ գործատուի մոտ են անցկացվելու հատուկ և ընդհանուր մասնագիտական բոլոր մոդուլները, յուրաքանչյուր մոդուլի համար սահմանվել է, թե որ ստորաբաժանումում է իրականացվելու այն և ինչ ռեսուրս է անհրաժեշտ:

ՄԿԾ-ների վերանայումների վերաբերյալ պարբերաբար իրականացվում են քննարկումներ, տվյալներ հավաքագրվում են հարցումներից, ավարտական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններից, որտեղ ներառված էին առաջարկություններ (բացառությամբ «Քույրական գործ» մասնագիտությանը, որտեղ չկան առաջարկություններ), գործատուների հետ հանդիպումներից և քննարկումներից: Օրինակ՝ Դուալ ծրագրի շրջանակներում փոփոխվել է ուսանողների գնահատման համակարգը (նախկինում ուսանողները գնահատվում էին և՛ հյուրանոցներում, և՛ քոլեջում, այդ գնահատականների անհամապատասխանության արդյունքում քոլեջը որոշել է գնահատում իրականացնել կարողությունների ստուգման ձևաչափով, իսկ գնահատականը նշանակվում է Քոլեջում): Դուալ ծրագրի կարողությունների գնահատման թերթիկի փորձարկումից հետո այս ձևաչափը ներդրվել է «Դեղագործություն» ՄԿԾ-ում: Քոլեջը նախատեսում է այն տարածել նաև այլ մասնագիտությունների շրջանակներում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջն իրականացրել է ՄԿԾ-ների վերանայում և բարելավում համապատասխան աշխատաշուկայի պահանջներին և շահակիցների առաջարկներին: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս մոտեցումը կարող է նպաստել Քոլեջի կրթության որակի շարունակական բարելավմանը, շրջանավարտների զբաղվածության աճին և Քոլեջի հեղինակության ամրապնդմանը:

Դուալ կրթության ներդրումը «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դեպքում արդյունավետ պրակտիկ փորձ ձեռք բերելու հնարավորություն է ստեղծել ուսանողների համար: Քոլեջի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը, գործատուների ներգրավումը ուսումնական գործընթացին, ինչպես նաև գործատուների մոտ իրականացվող մոնիթորինգները հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ կապ հաստատելու կրթական ծրագրերի և իրական աշխատաշուկայի պահանջների միջև: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ այս փորձը կարող է ավելի լայնորեն կիրառվել այլ մասնագիտությունների շրջանակներում՝ ընդլայնելով գործատուների հետ համագործակցությունը և ՄԿԾ-ների համապատասխանությունը աշխատաշուկայի կարիքներին:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ Քոլեջը դասավանդման դասական մեթոդներին զուգահեռ կիրառում է ժամանակակից ինտերակտիվ մեթոդներ, որը ուսանողակենտրոն ուսուցման լավ օրինակ է, ինչը կարող է դասավանդման գործընթացը դարձնել գրավիչ, բարձրացնել ուսանողների մոտիվացիան՝ ապահովելով ուսումնական նյութի արդյունավետ յուրացում: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևորում է դասավանդման լավ փորձի տարածման աշխատանքների պլանավորումն ու համակարգված իրականացումը, ինչը կնպաստի կրթական

ծրագրերի որակի բարելավմանը, դասավանդման արդյունավետության բարձրացմանը և մասնագիտական համայնքի ներսում գիտելիքի ու փորձի փոխանակմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը սկսել է օգտագործել նոր մոտեցումներ գնահատման գործընթացներում՝ փորձարկելով կարողությունների ստուգման թերթիկը դուալ կրթական ծրագրում և այնուհետև ներդնելով «Դեղագործություն» ՄԿԾ-ում: Սա վկայում է այն մասին, որ Քոլեջն արձագանքում է նախորդ փորձի արդյունքներին և մշտապես ձգտում է բարելավել ուսանողների ձեռք բերած հմտությունների հավաստիացումը: Այնուամենայնիվ, գնահատման համակարգում դեռ առկա են անհստակություններ, մասնավորապես՝ հմտությունների միավորային գնահատման մեխանիզմները տարբեր ծրագրերում միատեսակ չեն սահմանված, ինչը կարող է հանգեցնել գնահատման մեթոդաբանական խնդիրների:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջում առկա է «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կարգ, որն արդեն անցել է ՊԻԳԲ շրջափուլը: Սակայն փորձագիտական խումբը նշում է, որ գնահատման հստակ սահմանված չափանիշների բացակայությունը կարող է խանգարել գնահատման գործընթացի թափանցիկության ապահովմանը: Հստակ չափանիշների բացակայությունը կարող է նաև դժվարացնել ուսանողների համար գնահատման արդյունքների մեկնաբանությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Դուալ կրթաձևի ներդրման ժամանակ իրականացվել են համեմատություններ այլ Քոլեջի նույն կրթական ծրագրի հետ, սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջը մինչ այժմ համեմատական վերլուծություններ չի իրականացրել հայաստանյան և միջազգային միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ: Մինչդեռ նմանատիպ ուսումնասիրությունները հնարավորություն կտան լրամշակել կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, բարելավել ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացումը և ապահովել նրանց ավելի բարձր մրցունակություն աշխատաշուկայում՝ այդպիսով լավարկելով ուսումնական տարբեր գործընթացները, ապահովելով ժամանակի պահանջներին համապատասխան կրթության իրականացում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջում ՄԿԾ-ները վերջին տարիներին բարելավվել են աշխաշուկայի կարիքներին համապատասխան, դասավանդման մեթոդները ապահովում են ուսանողակենտրոն ուսուցում, ուսանողներին տրվող առաջադրանքներում առկա են մասնագիտական հմտություններ զարգացնող հանձնարարություններ և որոշ մասնագիտությունների գծով ավարտական քննությունները ստուգում են նաև գործնական կարողություններ, տվյալների հավաքագրման մեխանիզմները նպաստում են կրթական ծրագրերի շարունակաբար բարելավմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Քոլեջում 6 մասնագիտությունների գծով ընդունելությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով ավարտական փաստաթղթի գնահատականը: Ոլորտային 4 մասնագիտությունների համար ընդունելությունը կազմակերպվում է քննությամբ: «Դիզայն» մասնագիտության համար ընդունելության քննություններն են Գծանկար, Գունանկար, Կոմպոզիցիա, իսկ բժշկական՝ «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» մասնագիտությունների համար՝ Կենսաբանություն առարկան: Քննությունների համար ձևավորվում է քննական հանձնաժողով: Քննություններից առաջ ընդունող հանձնաժողովը դիմորդներին և ծնողներին տեղեկացնում է քննության արդյունքների բողոքարկման հնարավորության և կարգի մասին: ԿՏՊՔ-ում վերջին տարիներին ընդունելության քննությունների գնահատականների բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել:

Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են այցեր տարբեր հանրակրթական դպրոցներ՝ քոլեջը ներկայացնելու նպատակով: Ամեն տարի իրականցվում է «Բաց դռների օր», որտեղ ապագա ուսանողները կարողանում են ավելի լավ պատկերացում կազմել իրենց նախընտրած մասնագիտության մասին: Դիմարողների հավաքագրման հարթակ է ԿՏՊՔ-ի պաշտոնական կայքէջը ընդունելության անվճար և վճարովի տեղերի վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են հասարակայնության հետ կապերի պատասխանատուն, ՈՒԽ անդամները, կարիերայի կենտրոնը:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ» և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների գծով: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 719 ուսանող:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման համար իրականացվում են կուրսղեկի ժամեր: Կուրսղեկների ժամերին ուսանողները հնարավորություն ունեն իրենց խնդիրները քննարկել փոխտնօրենի հետ: Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով Որակի կենտրոնի կողմից իրականացվում է հանդիպում-քննարկումներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերհանված կարիքների հիման վրա տեղի են ունենում բարելավումներ: Օրինակ՝ ուսանողների պահանջների հիման վրա «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ-ում ավելացվել է ռուսաց լեզվի դասաժամերի քանակը:

Ուսանողների կարիքների բացահայտման գործընթացում Ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) կարևոր դեր է խաղում: ՈՒԽ-ն համակարգում է ուսանողների կողմից բարձրաձայնված խնդիրները և ներկայացնում դրանք ղեկավարությանը՝ համապատասխան լուծումներ գտնելու համար: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղից տեղափոխված ուսանողների կրթական գործընթացին ինտեգրվելու հարցը քննարկվել է ՈՒԽ-ի հանդիպումների ընթացքում:

ՈՒԽ-ի նախաձեռնությամբ Քոլեջում տեղադրվել է բողոքների և առաջարկությունների արկղ, որը հնարավորություն է տալիս ուսանողներին անանուն կերպով բարձրաձայնելու իրենց խնդիրներն ու առաջարկները: Արկղից դուրս բերված հարցերը քննարկվում են ՈՒԽ-ում՝ փոխտնօրենի մասնակցությամբ, իսկ դրանց լուծումները հրապարակվում են Քոլեջի ռադիոկապի միջոցով: Այս մեխանիզմի շնորհիվ լուծվել են մի շարք կարևոր հարցեր, օրինակ՝ վերանայվել են դասամիջոցների երկարությունը և այլ խնդիրներ:

Քոլեջում, նախքան քննությունները, կազմակերպվում են խորհրդատվական հանդիպումներ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Քոլեջի իրականացրած հարցումների համաձայն՝ ուսանողները կարևորում են այս խորհրդատվական պարապմունքները, և նրանց 55%-ը դրանցում ակտիվորեն ներգրավված է: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսները ոչ միայն տրամադրում են նախաքննական խորհրդատվություն, այլև անհատական աջակցություն են ցուցաբերում դասերից հետ մնացած ուսանողներին: Այս գործընթացն իրականացվում է հետադարձ կապի, լրացուցիչ քննարկումների միջոցով:

Քոլեջում ուսանողների համար իրականացվում են առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների ուղղությամբ Լեզուների կաբինետի աշխատանքների միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց հուզող հարցերով ազատ դիմում են վարչական անձնակազմին:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի կենտրոն: Կարիերայի կենտրոնը կազմակերպում է մի շարք միջոցառումներ ինքնակենսագրականների պատրաստման, փոխանցելի հմտությունների ձևավորման ուղղությամբ՝ նպաստելու աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանն ու կարիերայի պլանավորման հմտությունների ձևավորմանը: Կարիերայի կենտրոնը ունի հստակ պլանավորած դասընթացներ, որոնք իրականացվում են ուսանողի ուսուցման ողջ ընթացքում, օրինակ՝ մեդիագրագիտության, գործնական էթիկետի: Կենտրոնը նաև կազմակերպում է Քոլեջի հաջողված շրջանավարտների հետ հանդիպումներ:

Կարիերայի կենտրոնը պահպանում է տեղեկատվություն շրջանավարտների զբաղվածության մասին: Քոլեջը կնքել է մի քանի տասնյակ համաձայնագրեր գործատուների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ: Կարիերայի պատասխանատուն պարբերաբար թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է շրջանավարտներին, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի

են անցել կարիերայի պատասխանատուի օժանդակությամբ: 2024 թվականի տվյալներով շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 149 շրջանավարտներից 21-ը շարունակում են ուսումը, 68-ը աշխատում են, որոնցից 26-ը՝ իրենց մասնագիտությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով նրանց հանձնարարվում են ռեֆերատներ, անհատական աշխատանքներ: Ուսանողներին տրվող ընթացքիկ առաջադրանքներում կարևորվում է ինքնուրույն աշխատանքը, վերլուծական միտքը:

Ուսանողական խորհուրդը կազմված է 27 անդամից: Անդամները առաջարկվում են կուրսղեկների կողմից և ընտրվում բաց քվեարկության միջոցով: Առկա են 5 հանձնաժողովներ՝ ուսումնամասնագիտական, մշակույթի, սպորտի և ռազմահայրենասիրական, ուսանողների հետ կապի, տեղեկատվական և ռադիոհանգույց:

ՈՒԽ-ն ֆինանսավորումը ստանում է պահանջագրերի միջոցով միջոցառումների կազմակերպման համար:

Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին: ՈՒԽ-ն քննարկում և պլանավորում է տարեկան 7-8 նիստ, որոնցում ներկա են լինում դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը, դասախոսական կազմից ներկայացուցիչներ, որոշ նիստերին մասնակցություն են ունեցել նաև գործատուներ: Նիստերի ժամանակ քննարկվում են կարիերայի կենտրոնի հետ մեկտեղ դիմորդներին քոլեջ ներգրավելու և ուսանողների հետաքրքրվածությունը ՈՒԽ-ի կազմակերպած միջոցառումներում բարձրացնելու հարցեր:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր ևս քննարկվել են: Ըստ ինքնավերլուծության՝ Ուսանողական խորհուրդը հաճախ է կազմակերպում տոներին նվիրված միջոցառումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները ակտիվ ընթացք ունեն: Ուսխորհրդի գործունեության մասին ուսանողները կարող են տեղեկանալ նաև ԿՏՊՔ-ի ֆեյսբուքյան էջից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում գործում են ուսանողների ընտրության և հավաքագրման հստակ մեխանիզմներ, ինչը նպաստում է ուսումնական հաստատության թափանցիկ աշխատանքին և ապահովում է դիմորդների կայուն հոսք: Դիմորդների ներգրավման գործընթացն իրականացվում է բազմակողմանի մոտեցմամբ՝ ներառելով ինչպես այցելություններ դպրոցներ, այնպես էլ թվային հարթակների օգտագործում, ինչը բարձրացնում է Քոլեջի ճանաչելիությունը և դիմորդների հետաքրքրվածությունը:

Ուսանողակենտրոնության սկզբունքի պահպանումն արտահայտվում է կրթական կարիքների շարունակական ուսումնասիրման, դրանց վերհանման և նպատակային լուծումների իրականացման մեջ: Ուսանողական կառույցների, մասնավորապես ՈՒԽ-ի ներգրավվածությունը կարիքների բացահայտման և դրանց ներկայացման գործընթացում ապահովում է ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարման գործընթացներին:

ՈՒԽ-ի գործունեությունը և ուսանողների հարցերին արձագանքելու մեխանիզմների առկայությունը փաստում են, որ Քոլեջը ձգտում է ապահովել ուսանողների շահերի պաշտպանությունը և բարելավել նրանց կրթական միջավայրը: Բողոքների և առաջարկությունների արկղի առկայությունը, ինչպես նաև խնդիրների լուծման հրապարակային ներկայացման մեխանիզմները նպաստում են ուսանողների ձայնի լսելիությանը և Քոլեջի կառավարման գործընթացների թափանցիկությանը:

Կարիերայի կենտրոնի աշխատանքը կարևոր դեր է խաղում շրջանավարտների զբաղվածության ապահովման և նրանց կարիերայի պլանավորման մեջ: Շրջանավարտների հետ հետադարձ կապի համակարգված զարգացումը կնպաստի Քոլեջի կողմից կրթական ծրագրերի շարունակական վերանայմանը՝ ըստ աշխատաշուկայի պահանջների:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում գործում է ուսանողների ընտրության և ընդունելության արդյունավետ մեխանիզմներ, որոնք բերել են ուսանողների թվի աճին, վեր են հանվում ուսանողների կարիքները, առկա են խորհրդատվություններ դասերից հետ մնացող ուսանողների համար, առկա են կարիերայի նպաստող ծառայություններ, հավաքագրվում են տվյալներ շրջանավարտների վերաբերյալ, Քոլեջի ՈՒԽ-ն

ակտիվ դեր ունի ուսանողների կարիքների բացահայտման և տեղեկատվության տարածման գործում, ուսանողները ներգրավված են հետազոտական աշխատանքներում, փորձագիտական խումբը գտնում է, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները :

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿՇ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈՒՀ-ի 2020-2025թթ.-ի ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է զարգացնել դասախոսական կազմի ներուժը, բարելավել աշխատանքային միջավայրը: Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ 2020 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 48-Ն հրամանով հաստատված ‹‹Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման›› կարգի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ, որոնց մինչ այժմ 8 թեկնածու է մասնակցել:

Մրցույթի ընթացքում անցկացվում է բանավոր հարցազրույց, որն իրականացնում է տնօրենից, ուսումնական աշխատանքների գծով տեղակալից, ամբիոնի վարիչից, կառավարման խորհրդի նախագահից և համապատասխան ոլորտի մասնագետից բաղկացած հանձնաժողովը: Ամբիոնների առաջարկությամբ կազմվում է հարցաշար, որը ներառում է մասնագիտական հարցեր, իսկ մանկավարժական հմտությունները ստուգող իրավիճակային հարցերը ներկայացվում են առանց նախապես պատրաստված հարցաշարի: Հանձնաժողովի անդամները ձևակերպում են դասապրոցեսի հնարավոր իրավիճակներ, որոնցից հետո քվեարկությամբ ընտրված թեկնածուն ընդգրկվում է դասախոսական կազմում:

2023 թվականի օգոստոսի 1-ի N 99-Ն ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատություններին տրվել է հնարավորություն՝ առանց մրցույթի, համատեղության կարգով ներգրավել «տվյալ ոլորտում մասնագիտական գործունեություն իրականացնող մասնագետների»: Այս փոփոխությամբ քոլեջը կարողացել է աշխատանքի ընդունել 2 դասավանդողի հյուրանոցային ոլորտից, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար 2 բժշկի և 1 ատամնատեխնիկի, ինչպես նաև «Քույրական գործ» մասնագիտության համար՝ «Հրազդանի ԲԿ»-ում աշխատող բժիշկների:

Ուսումնաօժանդակ անձնակազմի ներգրավման համար հատուկ մեխանիզմներ սահմանված չեն, վերջիններիս ներգրավումը կատարվում է՝ հաշվի առնելով հաստիքացուցակը, համալրման կարիքը և հստակ պահպանվում են ՀՀ ԱՕ-ի դրույթները: Հավակնորդները աշխատանքի են ընդունվում տնօրենի հրամանով: Նրանց համար, ի տարբերություն մրցույթով աշխատանքի ընդունված և/կամ մասնագիտական փորձ ունեցող դասախոսների, սահմանվում է փորձաշրջան: Վերջին 5 տարվա ընթացքում աշխատանքի է ընդունվել 8 ուսումնաօժանդակ կազմի աշխատակից:

Քոլեջը սեփական ուժերով ներդրել է նաև հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հաստիք, ով նաև Քոլեջի սոցցանցերի և պաշտոնական կայքէջի պատասխանատուն է և հաստատում է այդ էջերում հայտնվող նյութերը:

Ըստ կրթական ծրագրերի՝ դասախոսի առջև դրված հստակ պահանջներ կան՝ սահմանված յուրաքանչյուր կրթական ծրագրի պետական կրթական չափորոշիչների 5-րդ գլխով, ինչպես նաև քոլեջում մշակվել են դասախոսի պաշտոնի նկարագրեր, որոնցում հստակեցված են դասախոսի կարևորագույն աշխատանքային գործառույթները, պարտականությունները, ՊԿՉ-ի վերոնշյալ պարտադիր պահանջներին ավելացվել է համակարգչային համապատասխան գիտելիքների առկայությունը:

Քոլեջում դասավանդում են 74 դասախոս, որից 52-ը հիմնական, 19-ը՝ համատեղությամբ և 3-ը արտադրական ուսուցման վարպետ: Դասավանդողներից 72-ն ունեն բարձրագույն կրթություն,

իսկ 2-ը՝ միջին մասնագիտական կրթություն: Ներկայումս քոլեջի 18 դասախոս գործատուներ են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտ-դասախոսները ներկայումս 4 են:

Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը նվազագույնը 1 և առավելագույնը 5 մոդուլ/առարկա է դասավանդում:

2018 թվականին քոլեջում հաստատվել է «Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ», որը վերանայվել է 2023 թվականին: Ըստ կարգի՝ դասախոսական կազմի գնահատում պարբերաբար իրականացվում է ուսանողական հարցումների միջոցով:

Դասախոսական կազմի գնահատման մեկ այլ մեխանիզմ են դասալսումները: Քոլեջն ունի «Դասալսումների անցկացման և վերլուծության կարգ», որը վերանայվել է 2024 թվականին: Դասալսումների նպատակներից է կարիքի գնահատումը, դասավանդման լավ փորձի վերհանումը և տարածումը, դասախոսների մանկավարժական հմտությունների լավացումը:

Քոլեջում դասալսումներ կարող են իրականացնել տնօրենը, տնօրենի տեղակալները, որակի կենտրոնի ղեկավարը, ամբիոնի վարիչները, դուալ ծրագրի ղեկավարը, կուրսղեկը ըստ նպատակների, իսկ ըստ կարիքի նաև ծնողը կամ հոգեբանը: Կարող են իրականցվել պլանավորվորված (արտահայտված են ամբիոնների պլաններում) և չպլանավորված դասալսումներ: Գործում է դասալսումների անցկացման ձևաթերթ, որն անցել է ՊԻԳԲ շրջափուլ և որը նաև հնարավորություն է տալիս դասալսվող դասախոսին կարծիք թողնել դասալսման վերաբերյալ:

Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ, օրինակ՝ ամբիոնի վարիչը պատմություն առարկայի դասը լսելուց հետո կիրառված մեթոդի լավարկման համար գործնական առաջարկություն էր արել դասախոսին, որը հետո պատմություն առարկայի դասախոսը ներդրել էր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բացի հարցումներից Որակի կենտրոնը ամբիոնի վարիչների և ամբիոնի այլ դասախոսների հետ մասնակցում է գործատուների մոտ իրականացվող մոնիթորինգներին՝ հյուրանոցներում, բժշկական կենտրոնում, դեղատներում, ստոմատոլոգիական կլինիկայում և այլն՝ դիտարկելու գործատուների մոտ անցկացվող դասընթացները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը յուրաքանչյուր տարվա ֆինանսական պլանավորման ժամանակ որոշակի գումար է նախատեսում (400.000 դրամ) աշխատակիցների մասնագիտական որակների բարձրացման գործընթացները կազմակերպելու համար, սակայն վերջին հինգ տարվա կտրվածքով դասախոսական անձնակազմը քոլեջի կողմից վճարովի մասնագիտական վերապատրաստման չի մասնակցել:

Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին: ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին 2022-2024 թվականներին մասնակցել են քոլեջի 43 դասախոսներ: Վերապատրաստումից հետո իրականացվում են փորձի փոխանակման միջոցառումներ: Արդյունքում որոշ դասախոսներ ներդրել են ինտերակտիվ մեթոդներ:

Սեփական նախաձեռնությամբ վերապատրաստման է մասնակցել «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի դասախոսներից մեկը, ով արդյունքում առաջարկել է պրակտիկայի ծրագրում ներդնել ծրագրավորման նոր լեզու, ստացել է տնօրենության համաձայնությունը և նոր ուսումնական տարվանից ծրագրում կներառվի ծրագրավորման Python լեզուն: Այս ուսումնական տարում Քոլեջից մասնագիտական վերապատրաստման և ատեստավորման կմասնակցի 5 դասախոս՝ «Ջերմատնային տնտեսություն» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտություններից:

Քոլեջի փորձառու դասախոսները կազմակերպում են մեթոդական վերապատրաստումներ, որին 2024 թվականին 19 դասախոս է մասնակցել: Գործատու դասախոսների հետ փորձի փոխանակման միջոցառումներ առկա չեն:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում համատեղող դասավանդողների միջին տարիքը 38 տարեկան է, իսկ հիմնական աշխատող դասախոսներինը՝ 48: Դասախոսական կազմի կայունությունն ապահովելու համար Քոլեջը դասավանդման գործընթացներում ներգրավում է երիտասարդ կադրեր, որպեսզի նրանք տարեց դասախոսների հետ աշխատելու, նրանցից սովորելու հնարավորություն ունենան (օրինակ՝ վիրաբույժ): Քոլեջն ունի նաև կադրային ռեզերվ, որում կան 43

թեկնածուների տվյալներ: Հիմնականում գերակշռում են բնագիտական և հումանիտար առարկաներ ներկայացնողները: Ցանկում կա նաև 1 էնդոկրինոլոգ:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում: Օրինակ՝ ՈԱ ղեկավար, Տնօրենի պարտականությունները կատարող, դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և այլն:

Ըստ ինքնավերլուծության՝ ԿՏՊՔ-ի տնօրենությունը կարևորում և խրախուսում է այն դասախոսների և վարչական աշխատակազմի մասնագիտական առաջընթացը, ովքեր աշխատանքային գործունեության ընթացքում աչքի են ընկել իրենց հմտություններով և աշխատասիրությամբ: Նմանատիպ դրական օրինակներ են՝ ամբիոնի վարիչը նշանակվել է բաժնի վարիչ, անգլերենի դասախոսներից մեկը նշանակվել է ամբիոնի վարիչ, մյուսը՝ հանրակրթության բաժնի վարիչ, պատմության դասախոսը նշանակվել է որակի պատասխանատու:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում գործում է մենթորություն տրամադրելու լավագույն փորձ, դրանք առավելապես արտահայտված են ամբիոնների աշխատանքներում: Ամբիոնների վարիչները մշտապես ուշադրության կենտրոնում են պահում երիտասարդ և նոր ներգրավված դասախոսներին՝ ծանոթացնելով տվյալ առարկայի դասավանդման մեթոդաբանությանը (օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում ներգրավվել է Ա. Մարտիրոսյանը և նրան աջակցություն է ցուցաբերել ամբիոնի վարիչը՝ դասալսումների և համատեղ դասերի միջոցով), առարկայի և դասընթացի փաստաթղթավորմանը (այս առումով աջակցություն ցուցաբերվել է հատկապես պրակտիկ բժիշկ դասախոսներին):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը հետևողականորեն բարելավում է դասախոսական կազմի ձևավորման, գնահատման և զարգացման մեխանիզմները: Մրցութային ընտրության գործընթացի կիրառումը, ինչպես նաև ոլորտի մասնագետների ներգրավման հնարավորության ստեղծումը, ապահովում են պրոֆեսորադասախոսական կազմի որակական բարձր ցուցանիշներ: Դասախոսների մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման ներդրված մեխանիզմները, մասնավորապես դասալսումները և ուսանողական հարցումները, ապահովում են դասավանդման շարունակական բարելավում:

Մասնագիտական վերապատրաստումների խրախուսումը կարևոր քայլ է, սակայն դրանց արդյունավետ կիրառման հնարավորությունները դեռևս ամբողջությամբ չեն իրացվել: Վերապատրաստման համար նախատեսված ֆինանսավորումը պետք է ուղղորդվի առավել նպատակային՝ դասախոսական կազմի զարգացման ռազմավարական նպատակներին համապատասխան: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական վերապատրաստումների ռազմավարական պլանավորում՝ ապահովելով բոլոր դասախոսների կարողությունների զարգացումը՝ հիմնվելով կարիքների գնահատման վրա և ներառելով ինչպես մեթոդական, այնպես էլ ոլորտային նորարարական մոտեցումներ:

Քոլեջում առկա է դասախոսական կազմի աստիճանական երիտասարդացման միտում, ինչը նպաստում է նորարարական մոտեցումների ներմուծմանը: Միևնույն ժամանակ փորձառու դասախոսների կողմից իրականացվող մենթորությունը կարևոր դեր է խաղում նոր կադրերի մասնագիտական ինտեգրման գործում: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է «Երիտասարդ դասախոսների զարգացման ծրագրի» ներդրումը, որը կներառի սկսնակ դասախոսների մենթորություն փորձառու մասնագետների կողմից, դասավանդման մեթոդաբանության դասընթացներ և ինքնագնահատման մեխանիզմներ՝ շարունակական զարգացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում կադրային ռեզերվի առկայությունը, որը հնարավորություն է տալիս ապահովելու դասախոսական կազմի սահուն սերնդափոխությունը և արագ լրացնել թափուր հաստիքները: Այնուամենայնիվ անհրաժեշտ է, որ կադրային ռեզերվի կառավարումը լինի ավելի համակարգված և պարբերաբար վերանայվի՝ ապահովելով դասախոսական կազմի ներուժի առավել արդյունավետ օգտագործումը:

Քոլեջի պրոֆեսորադասախոսական կազմը ապահովում է ՄԿԾ-ների նպատակների իրականացումը, սակայն շարունակական մասնագիտական զարգացումը, երիտասարդ դասախոսների ներգրավման գործընթացների համակարգվածությունը և վերապատրաստման քաղաքականության հստակեցումը պահանջում են լրացուցիչ ջանքեր: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը պետք է ընդլայնի միջազգային համագործակցության

շրջանակները միջազգային ծրագրերի միջոցով, ինչը թույլ կտա դասախոսներին տիրապետել նոր մեթոդների, կիրառել միջազգային լավագույն փորձն ու ընդլայնել մասնագիտական ցանցերը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի մասնագիտական բարձր որակավորումներ ունեցող դասախոսական կազմ, առկա են ոլորտի գործատու դասախոսներ, դասախոսական կազմը համալրվում է նաև քոլեջի շրջանավարտների ներգրավմամբ, մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզներ կան և՛ վարչական, և՛ դասախոսական կազմի համար, առկա են կարիքների գնահատման մեխանիզմներ, քոլեջն ապահովում է դասախոսական կազմի կայունությունը, առկա է երիտասարդացման միտում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարական նպատակներում հետազոտական աշխատանքների իրականացումը որպես նպատակ սահմանված չէ, սակայն գործողությունների պլանով նախատեսված է խրախուսել հետազոտական գործունեությունը՝ որակյալ կրթության ապահովման նպատակով, և այս ուղղությամբ քոլեջը ակտիվորեն զարգացնում է իր գործունեությունը: Նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը մշակել և ներդրել է «ԿՏՊՔ ուսանողների հետազոտական, ինքնուրույն աշխատանքների իրականացման ընթացակարգ», որտեղ սահմանվում են Քոլեջի հավակնությունները (լրացուցիչ նոր գիտելիքի ձեռքբերում, ինքնուրույն վերլուծական ստեղծագործական հմտությունների ձևավորում, հետազոտական աշխատանքների պլանավորման, իրականացման և ներկայացման հմտությունների ձևավորում), որոնք առավել շատ նպատակներ են: Սահմանված են նաև հետազոտական, ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջները, հետազոտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ձևաչափը և բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող հետազոտական, ինքնուրույն աշխատանքների ուղղությունները ըստ մասնագիտությունների: Ամբիոնների տարեկան պլաններում որպես պարտադիր գործողություն ներառված է հետազոտական աշխատանքների իրականացումը:

Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ գրեթե բոլոր մասնագիտությունների գծով առկա են հետազոտական և վերլուծական կարողություններ ձևավորող առաջադրանքներ: Այսպես՝ հետազոտական աշխատանքի օրինակ է «Քույրական գործ» մասնագիտության ուսանողի կողմից «Մարսողական և արտազատական համակարգեր» թեմայի շրջանակում հեմոդիալիզի տակ գտնվող պացիենտի բուժման ընթացքի ուսումնասիրությունը: Ուսանողը կատարել է հետազոտություն, վերլուծություն, ներկայացրել եզրակացություն:

«Լրացուցիչ ծառայությունների կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մոդուլի շրջանակներում ուսանողներին առաջարկվել է ստեղծել հյուրանոցում մատուցվող լրացուցիչ անիմացիոն ծրագիր: Աշխատանքի վերջնարդյունքը ներկայացվել է տեսահոլովակի տեսքով:

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները ուսումնասիրել են կարիեսի պուլպիտի և պերիոդոնտիտի տարածվածությունը Հրազդան քաղաքում: Հետազոտություն է իրականացվել ‹‹Անատամություն›› մոդուլի շրջանակներում, որի արդյունքում ուսանողը ներկայացրել է լրիվ անատմության դեպքում քիչ ծախսատար և ամուր պրոթեզի գաղափար՝ արծաթե կարկասի կիրառում:

«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության շրջանակներում «Ալգորիթմների տարրերի կիրառումը» մոդուլից ուսանողները, կատարելով համապատասխան հետազոտությունները, ուսումնասիրելով միջազգային փորձը,

ճշգրիտ և կարգավորված հաջորդական քայլերի օգնությամբ կարողացել են լուծել իրենց առջև դրված խնդիրները՝ ստանալով զգեստապահարան:

Միևնույն ժամանակ որոշ ռեֆերատիվ բնույթի աշխատանքների ուսումնասիրությունից պարզվեց, որ բոլոր մասնագիտություններում ինքուրույն վերլուծությունները սակավ էին: Դրանք իրենցից ներկայացնում են ինֆորմացիայի հաղորդումներ, արտատպումներ ձեռնարկներից և համացանցից:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտության որոշակի տարրեր կան նաև առանձին մոդուլների շրջանակներում տրվող հանձնարարականներում: Օրինակ՝ «Անալիտիկ քիմիա» մոդուլի շրջանակներում իրականացված հետազոտության շրջանակներում ուսանողները պարզել են օսլայի պարունակությունը տարբեր թթվասերների տեսակի մեջ: Պրակտիկայի շրջանակներում իրականացրել են եղինջի տերևներում վիտամին P-ի որոշում:

Քոլեջի 3 դասախոսներ մասնագիտական ձեռնարկների հեղինակներ են: 2 դասախոս էլ հանդիսանում են միջազգային հոդվածների հեղինակ և համահեղինակ: Ձեռնարկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք հրատարակվել են 2019-2023 թվականների ընթացքում:

Հարկ է նշել, որ Քոլեջը սահմանել է հետազոտական աշխատանքներ իրականացնող ուսանողների և դասավանդողների խրախուսում: Ուսանողների անհատական աշխատանքները լուսաբանվել են թե՛ քոլեջի, թե՛ համագործակցող կազմակերպությունների սոցիալական հարթակներում: Դասախոսական անձնակազմի ներկայացուցիչը ստացել է դրամական խրախուսում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը նախաձեռնել և ներդրել է ուսանողների հետազոտական, ինքնուրույն աշխատանքների իրականացման ընթացակարգը, որը հնարավորություն է տալիս համակարգված ձևով խրախուսել հետազոտական կարողությունների զարգացումը: Ամբիոնների տարեկան պլաններում հետազոտական աշխատանքների ներառումը կարևոր քայլ է ուսանողների վերլուծական մտածողության ձևավորման և ուսումնառության որակի բարձրացման տեսանկյունից:

Ուսանողների կողմից իրականացվող որոշ հետազոտական աշխատանքների բնույթը վկայում է այն մասին, որ նրանք կարողանում են կիրառել տեսական գիտելիքները վերլուծական խնդիրների լուծման համար: Դրանց շրջանակներում ուսումնասիրվել են բժշկական, ատամնատեխնիկական, հյուրանոցային և տեխնոլոգիական ոլորտներին առնչվող թեմաներ, որոնցից մի քանիսն ունեն նաև կիրառական նշանակություն: Այս մոտեցումը կարևոր է, քանի որ թույլ է տալիս ուսանողներին խորացնել մասնագիտական գիտելիքները և զարգացնել հետազոտական հմտությունները:

Միևնույն ժամանակ հետազոտական առաջադրանքների դիտարկումը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում ուսանողները դեռևս սահմանափակվում են տեղեկատվության հավաքագրմամբ և վերարտադրությամբ՝ առանց խորքային վերլուծության: Սա վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է առավել հետևողական աշխատել ուսանողների հետ՝ զարգացնելու նրանց վերլուծական կարողությունները, հատկապես ռեֆերատային բնույթի աշխատանքներում, որպեսզի դրանք չսահմանափակվեն միայն աղբյուրների վերարտադրությամբ:

Դրական է, որ Քոլեջում դասավանդողները ներգրավված են մասնագիտական հետազոտական գործունեության մեջ և հեղինակել են մասնագիտական ձեռնարկներ ու միջազգային հոդվածներ: Սա հնարավորություն է տալիս կապակցել ուսումնական գործընթացն ու հետազոտական գործունեությունը, որն էլ կարող է նպաստել ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը հետազոտական աշխատանքների իրականացման համար նախատեսել է դրամական խրախուսում, ինչը կարող է բարձրացնել դասախոսների մոտիվացիան հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը կարող է նաև խրախուսման ձևաչափ մշակել դասախոս-ուսանող համատեղ հետազոտությունների իրականացման համար՝ բարձրացնելով ուսանողների վստահությունը և ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում և ապահովելով ավելի որակյալ հատազոտություններ:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կարող է ձևավորել հետազոտությունների արդյունքների ներկայացման հարթակներ, ինչը թույլ կտա փորձարկել ստացված արդյունքները, ստեղծել հնարավորություններ միջոլորտային հետազոտությունների իրականացման ու փորձի փոխանակման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը սահմանել է հետազոտական ուղղություններ, ակտիվ գործունեություն է ծավալում հետազոտական աշխատանքների իրականացումը խթանելու ուղղությամբ, մշակել է խրախուսման մեխանիզմ, մշակվել է կարգավորող փաստաթղթեր, առկա են հետազոտական բաղադրիչի ներդրման լավ օրինակներ, դասախոսները մշակել են ձեռնարկներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2020-2025թթ. ՌԾ-ի նպատակներից է՝ «Որակյալ մարդկային ռեսուրսներ և ենթակառուցվածքներ», որի համար սահմանված գործողություններ են՝ «զարգացնել և արդիականացնել քոլեջի ենթակառուցվածքները, նյութատեխնիկական բազան և ռեսուրսները, բարելավել անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, մասնագիտական կաբինետները, տեխնիկական հագեցվածությունը, արդիականացնել մարզադահլիճը, ստեղծել էլեկտրոնային գրադարան, քոլեջի և ներդնողների ջանքերով քոլեջի կից տարածքում կառուցել ջերմոց և արևային էլեկտրակայան»: Քոլեջը փորձել է իրականացնել նշված գործողությունների մի մասը. չի հաջողվել ստեղծել էլեկտրոնային գրադարան, լիարժեք բարելավել լաբորատոր պայմանները:

Քոլեջն ունի 3600 ք/մ ընդհանուր մակերեսով տարածք: Քոլեջը տեղակայված է չորսհարկանի մասնաշենքում, ունի հարակից պտղատու այգի, կաթսայատուն, ջերմոց և արևային էլեկտրակայան: Ներկայումս Քոլեջն ունի 37 լսարան, 4 լաբորատորիա, մեկ արհեստանոց, 9 ուսումնական կաբինետ, 3 համակարգչային լսարան, 90 հոգու համար նախատեսված դահլիճ, մարզադահլիճ, բացօթյա մարզահրապարակ: Քոլեջը չունի սննդի կետ:

Համակարգչային լսարաններն ունեն 50 համակարգիչ, որոնցից 10 համակարգիչները ձեռք են բերվել 2024 թվականին: 2024 թվականին համալրվել էր նաև վիրաբուժական կաբինետը նոր մուլյաժներով:

Քոլեջում առկա է երեք պրոյեկտոր և Smart գրատախտակ համակարգչային լսարաններում: Քոլեջի համակարգչային լսարաններում հասանելի է ինտերնետ կապը:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, իսկ ֆիզիկայի լաբորատոր աշխատանքների համար օգտվում են հարակից դպրոցների համապասխան լաբորատորիաներից:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 4140 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայալեզու է, իսկ օտարալեզու գրականություն դասախոսներն ուսանողներին տրամադրում են իրենց անձնական գրադարաններից: Գրադարանը թվայնացված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գրադարանավարը իր նախաձեռնությամբ և քոլեջի աջակցությամբ անցել է վերապատրաստում, որի արդյունքում նորագույն տեխնոլոգիաներ կկիրառվեն գրադարանի գործընթացների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, օրինակ՝ «Ատոմնատեխնիկական գործ» մասնագիտության համար՝ Հրազդան քաղաքի ատոմնաբուժարաններին կից ատոմնատեխնիկական լաբորատորիաները, «Քույրական գործ» մասնագիտություն համար՝ «Հրազդան ԲԿ»-ն: Քոլեջում իրականացվող Դուալ կրթական ծրագրերի շրջանակներում դասընթացների մի մասն անցկացվում են գործատուների մոտ և կիրառվում են գործատուների ռեսուրսները:

Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի վերանորոգումներ՝ որոշ տարածքներ կիսելով, քոլեջը դրանք դարձրել է լսարաններ:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2024 թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 70,8%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին: Ըստ 2024 թ. քոլեջի նախահաշվի, բացի աշխատավարձից քոլեջը ծախսեր է նախատեսել՝ 10,5%, ծառայությունների մատուցման, 17,6%- սոցիալական նպաստների, 0,8%- հիմնական միջոցների ձեռքբերման համար:

Շենքի ընթացիկ նորոգման համար 2024թ. նախահաշվում տրամադրվել է մեկ մլն դրամ: 2024 թվականի սեպտեմբերից կուրսղեկական աշխատանքը վճարովի է դարձել (խոսքը վերաբերում է հաստիքային մի քանի աշխատակիցների, օրինակ՝ փոխտնօրեն, մանկավարժ-հոգեբան, լաբորանտ և այլն, որոնք նախկինում չեն վճարվել կուրսղեկության համար), իսկ մոդուլային ուսպլաններում խորհրդատվական ժամերի համար դասավանդողներին 10 տոկոս հավելավճար է նախատեսվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի ջերմոցը և արևային կայանը կառուցվել են դրամաշնորհային ծրագրերի համաֆինանսավորման միջոցով:

2024թ. քոլեջի բյուջեի եկամուտների 81,5%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 17%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ վարսավիրական, խոհարարական, կարուձևի ուղղություններով, որոնցից ներգրաված մուտքերը քիչ տեսակարար կշիռ ունեն քոլեջի բյուջեի եկամուտների կառուցվածքում՝ կազմելով շուրջ 1,3 % և այլն:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թղթային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Լաբորատորիաներում առկա է օդափոխման համակարգ, փակցված են անվտանգության կանոնները:

Քոլեջն ունի բուժկետ, որի աշխատանքներն իրականացնում է մեկ դրույքով հրամանագրված բուժքույրը: Ինչպես նաև քոլեջն ունի մանկավարժ-հոգեբանի հաստիք՝ մեկ աշխատակցով: Վերջինս բացահայտում և հոգեբանական հնարավոր աջակցություն է ցուցաբերում նման կարիք ունեցող ուսանողներին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1 ուսանող, մուտքի մոտ կա թեքահարթակ: Քոլեջը չունի ապաստարան:

Սկսած 2021 թվականից քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են լսարանների կահավորվածությունից: Ուսանողների 90%-ը և դասախոսների շուրջ 88,1%-ը շենքային, լսարանային ու սպորտդահլիճի պայմաններից ունեն բարձր բավարարվածություն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն իր ռազմավարական ծրագրում հստակ առաջնահերթություն է սահմանել ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի և ռեսուրսների արդիականացման ուղղությամբ՝ ռազմավարական ծրագրով նախատեսելով համապատասխան գործողություններ: Այս մոտեցումը վկայում է, որ Քոլեջի ղեկավարությունը գիտակցում է ուսումնական միջավայրի բարելավման կարևորությունը և նպատակաուղղված է ստեղծելու ժամանակակից, հարմարավետ և ապահով պայմաններ ուսանողների և դասավանդողների համար:

Դրական է, որ Քոլեջը, իր ներքին ռեսուրսներից բացի, գործնական ուսուցման նպատակով օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, ինչն ապահովում է ուսանողների մասնագիտական հմտությունների ձևավորումը և աշխատաշուկայի պահանջներին առավել արդյունավետ պատրաստվելը: Դուալ կրթական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև պրակտիկաների կազմակերպումը գործընկեր կառույցներում, հնարավորություն են տալիս ուսանողներին սովորել իրական արտադրական միջավայրում, ինչը մեծացնում է նրանց մրցունակությունը:

Քոլեջի ֆինանսական կառավարման կայունության տեսանկյունից, կարելի է արձանագրել, որ առկա մոդելը թույլ է տալիս որոշակի կայունություն ապահովել, սակայն քոլեջի լրացուցիչ

ֆինանսավորման աղբյուրները բավականին սակավ են, ինչը դեռևս բավարար չէ երկարաժամկետ կայունության ապահովման համար: Փորձագիտական խումբը կարևորում է նոր ներդրումային մոդելների, դրամաշնորհային ծրագրերի և այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների որոնումն ու ընդլայնումը, ինչը կնպաստի բյուջեի բազմազանեցմանը և ռեսուրսների ավելացմանը:

Դրական է, որ Քոլեջը շարունակաբար իրականացնում է ենթակառուցվածքների բարելավում առկա ռեսուրսների հաշվին, որը նպաստել է բոլոր կրթական ծրագրերի մասով կիրառական ռեսուրսների ապահովմանը: Սա վկայում է Քոլեջի պատրաստակամության մասին՝ շարունակաբար բարելավելու ուսումնական ռեսուրսները և ստեղծելու ավելի ժամանակակից կրթական միջավայր: Միևնույն ժամանակ մինչ այժմ չի հաջողվել ստեղծել էլեկտրոնային գրադարան, ինչը ռազմավարական ծրագրով նախատեսված առաջնահերթություններից է: Այս բացը կարող է ազդեցություն ունենալ ուսանողների ուսումնառության որակի վրա՝ հատկապես տեղեկատվության հասանելիության տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն ապահովում է արտաքին հաղորդակցությունը Mulberry համակարգով, ինչը կարևոր քայլ է փաստաթղթաշրջանառության թվայնացման ուղղությամբ: Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջը դիտարկի միասնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ ներդնելու հնարավորությունը, ինչը կնպաստի տեղեկատվության արագ փոխանակմանը, կառավարման գործընթացների օպտիմալացմանն ու թափանցիկության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բոլոր ՄԿԾ-ների համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, շարունակաբար կատարվում է դրանց համալրում և բարելավում, որպես նորագույն տեխնոլոգիաներ գործատուների ռեսուրսների կիրառումը թույլ է տալիս ուսանողներին ծանոթանալ ժամանակակից նորագույն տեխնոլոգիաներին և իրական աշխատանքային միջավայրին, ներդրված են տրամադրվող ռեսուրսներից բավարարվածության գնահատման մեխանիզմներ, ապահովված է անվտանգ միջավայր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները կիսամյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց ղեկավարին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Քոլեջի ստորաբաժանումների հաշվետվությունները տարբերում են ըստ վերլուծականության մակարդակի: Որոշ հաշվետվություններ հիմնականում նկարագրական են և չեն ներառում վերլուծական բաղադրիչ կամ SWOT վերլուծություն (օրինակ՝ դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի հաշվետվությունները), մինչդեռ մյուսները ներառում են վերլուծական բաղադրիչ և ռազմավարական վերլուծություն (օրինակ՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի և բժշկական մասնագիտությունների գծով բաժնի վարիչի հաշվետվությունները):

Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության և ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: Տնօրենի հաշվետվությունները պարունակում են մանրամասն տվյալներ աշխատակազմի փոփոխությունների, ուսանողների ընդունելության, ներհոսքի ու արտահոսքի, ուսանողների առաջադիմության, դասախոսական կազմի վերապատրաստումների, պրակտիկաների կազմակերպման և անցկացման, ամփոփիչ ատեստավորման, շրջանավարտների զբաղվածության, քոլեջում անցկացված կազմակերպչական,

դաստիարակչական և մշակութային միջոցառումների և այլնի մասին: Հաշվետվությունը եզրափակվում է ըստ ռազմավարական ծրագրի կատարված տարեկան գործողությունների մասին տվյալներով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո ներդրվել է հաշվետվությունների ներկայացման միասնական համակարգ և ձևաչափ:

2011 թվականից քոլեջում գործարկվել է տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող նոր հարթակ՝ պաշտոնական կայքէջ, որը նշվում է որպես եռալեզու, սակայն կայքէջում ներկայացված նյութերը միայն հայերեն են: Կայքում ներկայացված չեն Քոլեջի ստորաբաժանումների հաշվետվությունները: Քոլեջն ապահովում է իրականացվող գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով Ֆեյսբուք, Ինստագրամ սոցիալական ցանցերը, առկա է անընդհատ թարմացվող տեղեկատվություն քոլեջում անցկացված մշակութային, կրթական, դաստիարակչական և ժամանցային միջոցառումների մասին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո ներդրել է Հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հաստիքը՝ կարևորելով տեղեկատվության հրապարականության և շահակիցների հետ հետադարձ կապի ապահովումը: Քոլեջի Հասարակայնության հետ կապերի պատասխանատուն է զբաղվում սոցկայքերով, էջերում տեղադրվող բոլոր նյութերը խմբագրվում են նրա կողմից և տեղադրվում կայքում և սոցիալական հարթակներում:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սոցիալական հարթակներում ներդրվել է հաղորդագրությունների և հաճախ տրվող հարցերի ավտոմատացման գործիքը՝ որպես հետադարձ կապի արդյունավետ գործիքակազմ:

Հետադարձ կապի շրջանակում ստացված և արձագանք ունեցած հաղորդագրությունների վիճակագրության համաձայն 2024 թվականին ֆեյսբուք /67/ և ինստագրամ /36/ սոցիալական ցանցերով ստացված բոլոր հաղորդագրություններն արձագանք են գտել:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ներդրվել է ինստագրամյան հարցումների ձևաչափ, որը հնարավորություն է տվել լսելի դարձնել ներքին շահակիցների կարծիքը և ստանալ համապատասխան արձագանքներ՝ բարելավելով գործընթացները: Օրինակ՝ ուսանողները ցանկացել են մասնակցել փափուկ հմտությունների ձեռքբերմանը նվիրված ոչ ֆորմալ դասերի, քոլեջը SMM-ի, AI-ի, թվային մարքեթինգի թեմաներով դասընթացներ է կազմել և անցկացրել:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Մասնավորապես՝ այց տարեցների խնամքի կենտրոն, վերջիններիս համար ժամանցային միջոցառումների անցկացում, շաքարային դիաբետի մասին տեղեկատվական միջոցառում դպրոցներում, ընդ որում ուսանողները գյուկոմետրիա են անցկացրել աշակերտների և ուսուցիչների շրջանում, կարիեսի և պուլպիտի տարածման և կանխարգելման մասին միջոցառում դպրոցներում, մասնագիտական կողմնորոշմանը նվիրված քննարկում աշակերտների հետ ինչպես բաց դռների օրերին, այնպես էլ դպրոցներում և այլն: 40-ից ավել ուսանողներ մասնակցում են «Հայկական Կարմիր խաչ»-ի կամավորական աշխատանքներին:

Անդրադառնալով ԿՏՊՔ-ի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցմանը՝ հարկ է նշել, որ քոլեջը 2021 թվականին իրականացրել է «Հաշվետար» մասնագիտությամբ կարճաժամկետ վճարովի ծրագիր: Քոլեջն իրականացրել է նաև 2 կարճաժամկետ ԼԿԾ՝ «Արևային կայանների մոնտաժում և սպասարկում» և «Կարուձև»:

ԿՏՊՔ-ն ունի «Կարուձև», «Վարսահարդար», «Սեղանի դիզայն» մասնագիտություններով կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու բոլոր հնարավորությունները (նյութատեխնիկական բազան), սակայն դիտարկվող ժամանակահատվածում չի իրականացրել՝ հաշվի առնելով լսարանների սակավությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է, որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջն ունի հաշվետվողականության ձևավորված համակարգ, որը ներառում է ստորաբաժանումների պարբերական հաշվետվությունները և դրանց վերլուծական վերամշակումն տնօրենի կողմից: Այնուամենայնիվ, տարբեր ստորաբաժանումների հաշվետվությունների վերլուծականության մակարդակը տարբեր է, և որոշ դեպքերում դրանք հիմնականում նկարագրական բնույթ ունեն՝ առանց խորացված վերլուծության կամ SWOT

տարրերի: Հաշվետվությունների միասնականացման և վերլուծական բաղադրիչի խթանման ուղղությամբ անհրաժեշտ է շարունակական աշխատանքներ իրականացնել:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ապահովում է տեղեկատվության թափանցիկությունը՝ սոցիալական ցանցերի և պաշտոնական կայքի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս շահակիցներին տեղեկանալ քոլեջի գործունեության վերաբերյալ: Սակայն ստորաբաժանումների հաշվետվությունները հանրայնացված չեն, ինչը կարող է սահմանափակել արտաքին շահակիցների՝ Քոլեջի գործունեության մասին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորությունը:

Հասարակության հետ կապի ձևավորման առումով կարևոր է գնահատել հետադարձ կապի արդեն ներդրված մեխանիզմները, ինչպիսիք են սոցիալական մեդիայի հաղորդագրությունների և հարցումների արձագանքումը, ինչպես նաև ուսանողական հարցումները: Դրանց շարունակական զարգացումն ու բազմազանեցումը կխթանի շահակիցների արձագանքների վրա հիմնված բարելավումները:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն ունի հասարակությանն ուղղված կրթական և սոցիալական միջոցառումների կազմակերպման փորձ: Ուսանողների ներգրավվածությունը կամավորական աշխատանքներում և սոցիալական նախագծերում ոչ միայն նպաստում է համայնքային զարգացմանը, այլև ձևավորում է ուսանողների մասնագիտական և սոցիալական պատասխանատվության զգացումը: Այս փորձը հնարավոր է ավելի համակարգված դարձնել՝ մշակելով սոցիալական ներգրավվածության ծրագրեր, որոնք կապահովեն շարունակական ներգրավվածություն համայնքային նախաձեռնություններում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա է վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողականության համակարգ, հաշվետվություններում առկա է վերլուծական բաղադրիչ, բարելավվել են տեղեկատվության տարածման մեխանիզմները, առկա են հետադարձ կապի ձևավորման մեխանիզմներ, առկա են հասարակությանը գիտելիքի փոխանցման դրական օրինակներ, քոլեջն ունի կայք և սոցիալական հարթակներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Ըստ քոլեջի 2020-2025թթ. ռազմավարական ծրագրի հինգերորդ՝ «Արտաքին կապեր և միջազգայնացում», նպատակի համար նախատեսվել են հետևյալ գործողությունները.

- եռալեզու կայքի և ֆեյսբուքյան էջի ստեղծում արտերկրյա ներդնողներին և դոնոր կազմակերպություններին քոլեջի մասին տեղեկատվության համար,
- միջազգային նմանատիպ ծրագրեր ունեցող հաստատությունների հետ կապերի հաստատում և փոխանակման ծրագրեր,
- արդյունավետ PR միջոցառումների իրականացում ներդնողներ գրավելու համար:

ԿՏՊՔ-ն ռազմավարական խնդիրները լուծելու նպատակի համար դեռևս չունի մշակած արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգեր և քաղաքականություն, ինչպես նաև առկա չէ արտաքին կապերի և միջազգայնացման զարգացմանն ուղղված գործընթացները համակարգող ստորաբաժանում կամ պատասխանատու անձ. այս ուղղությամբ աշխատանքները կատարում են ուսումնաարտադրական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, պրակտիկայի բաժնի վարիչը, կարիերայի ուղղորդման պատասխանատուն, դուալ կրթական ծրագրի ղեկավարը, բժշկական մասնագիտությունների գծով բաժնի վարիչը, հասարակայնության հետ կապերի պատասխանատուն:

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ երեք տասնյակ տեղական գործընկերների հետ: ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ գրեթե

բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցությունը հիմնականում կատարվում է պրակտիկաների, դուալ կրթական ծրագրի իրականացման տեսքով: Հաստատության ամենախոշոր գործատու-գործընկերներից են՝ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Հրազդանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ, «Ալպինա-ՏՏ» հյուրանոցը, Ծաղկաձորի «Մարրիոթ» և «Էյթի Էյթ» հյուրանոցները և այլն: Համագործակցություններն իրականացվում են պայմանագրերի, համաձայնագրերի և հուշագրերի հիման վրա: Քոլեջը համագործակցում է նաև Միասնական սոցիալական ծառայության հետ. համագործակցության արդյունքում շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցերն են լուծվում:

Քոլեջը նախատեսում է ակտիվացնել համագործակցության շրջանակները այլ քոլեջների և հաստատությունների հետ՝ կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունների, դասախոսների և ուսանողների փորձի փոխանակման և այլ ուղղություններով:

Հաստատությունը դեռևս ներգրավված չէ միջազգային ծրագրերում: Ըստ ինքնավերլուծության՝ հասարակայնության հետ կապերի պատասխանատուն և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը մասնակցել են Էրազմուս+ ծրագրի կազմակերպած հանդիպում-քննարկումներին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ միջազգայնացման համար քոլեջը նախատեսում է Linkedin հարթակում գրանցում, որի միջոցով ԿՏՊՔ-ն փորձելու է բարձրացնել տեսանելիությունը միջազգային հարթակներում: Ինչպես նաև Քոլեջը նախատեսում է պաշտոնական կայքէջում անգլերենով նյութերի տեղադրում, որոնց համար պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Անդրադառնալով ներքին շահակիցների՝ օտար լեզուների տիրապետմանը՝ հարկ է նշել, որ ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների 54,8 %-ը տիրապետում է անգլերենի, 90,5%-ը՝ ռուսերենի, 11,9%-ը՝ այլ լեզուների, ուսանողների շրջանում 2022թ. տվյալներով 83,9%-ը՝ ռուսերենի, 63,7%-ը՝ անգլերենի: Քոլեջում օտար լեզվի մակարդակը ստուգելու համար համապատասխան թեստեր չեն կիրառվել:

Քոլեջի դիտարկմամբ՝ անգլերենի ոչ բավարար իմացությունը դասավանդողների և ուսանողների համար համարվում է թույլ կողմ, որն էլ խոչընդոտում է միջազգային ծրագրերին մասնակցությանը, օտարալեզու գրականության օգտագործմանը և կրթական ծրագրերի համեմատական վերլուծությանը (բենչմարքինգին): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է կազմակերպել անգլերենի վերապատրաստման խմբակային դասընթացներ, որոնք կօգնեն ապահովել անհրաժեշտ լեզվական մակարդակ միջազգայնացման հետագա գործընթացների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը ռազմավարական ծրագրով նախատեսել է արտաքին կապերի և միջազգայնացման զարգացմանն ուղղված գործողություններ, ինչը վկայում է հաստատության՝ միջազգային համագործակցություն զարգացնելու մտադրության մասին: Քոլեջը համագործակցում է տեղական մի շարք գործընկերների հետ, ինչը նպաստում է ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը, պրակտիկա անցնելու հնարավորություններին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կարողությունների ձևավորմանը: Սակայն միջազգային համագործակցության փորձի բացակայությունը և միջազգայնացմանը նպաստող հստակ քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը խոչընդոտում են միջազգային ծրագրերում Քոլեջի ներգրավվածությանը:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել համակարգված մոտեցում՝ ներառելով միջազգայնացման պատասխանատու կամ համակարգող անձ, ինչը կապահովի միջազգային կապերի հաստատման և զարգացման նպատակային և համակարգված իրականացումը: Նման համակարգված մոտեցումը թույլ կտա ավելի արդյունավետ ներգրավել Քոլեջի դասախոսներին ու ուսանողներին միջազգային կրթական հնարավորությունների մեջ, ինչպես նաև ընդլայնել միջազգայնացման գործողությունների շրջանակը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ Քոլեջն աշխատանքներ իրականացնի այլ քոլեջների հետ ակտիվ համագործակցության ուղղությամբ, որը կնպաստի ուսումնական ծրագրերի բարելավմանը, լավագույն փորձի փոխանակմանը և կրթական գործընթացների զարգացմանը: Այս համագործակցությունները կարող են ապահովել ոչ միայն նոր մեթոդների ներդրում, այլև ուսանողների և դասախոսների համար համատեղ նախաձեռնությունների, փոխանակման ծրագրերի և մասնագիտական զարգացման նոր հնարավորություններ:

Անգլերեն լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը դասավանդողների և ուսանողների շրջանում սահմանափակում է միջազգային համագործակցության և օտարալեզու ռեսուրսների

հասանելիության հնարավորությունները: Այս առումով Քոլեջի՝ անգլերեն լեզվի վերապատրաստման ծրագրեր իրականացնելու նախաձեռնությունը կարող է նպաստել լեզվական հմտությունների բարելավմանը, ինչը կարևոր նախապայման է միջազգայնացման հետագա զարգացման համար: Սակայն այս գործընթացը պահանջում է հստակ ռազմավարություն և գործողությունների պլան, որը կներառի դասավանդողների և ուսանողների մասնագիտական կարիքներին համապատասխան լեզվական ուսուցման մեթոդներ:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև Քոլեջի՝ LinkedIn հարթակում գրանցվելու և պաշտոնական կայքէջում անգլերենով նյութեր հրապարակելու նախաձեռնությունը, ինչը թույլ կտա բարձրացնել հաստատության միջազգային տեսանելիությունը և ընդլայնել համագործակցության հնարավորությունները: Սակայն այս գործողությունների արդյունավետ իրականացումը պահանջում է լրացուցիչ ֆինանսական և մարդկային ռեսուրսների ներգրավում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ դեռևս թույլ է միջազգայնացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, այդ աշխատանքների համակարգման համար առկա չէ աշխատակից, ցածր է անգլերենի իմացության մակարդակը ուսանողների և դասախոսների շրջանում, թույլ է համագործակցությունը այլ քոլեջների հետ, առկա չեն միջազգային համագործակցության օրինակներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԿՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները սկսվել են 2015 թվականից, իսկ 2018 թվականից գործում է Որակի ներքին ապահովման կենտրոնը (ՈԱԿ): Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը ձևավորել է համապատասխան փաստաթղթային բազա, ներառյալ՝ «Որակի ապահովման քաղաքականությունը» և «Որակի ապահովման կանոնակարգը», որոնք մշակվել են 2018 թվականին և վերանայվել 2021 թվականին:

«Որակի ապահովման կանոնակարգը» սահմանում է ՈԱԿ-ի նպատակը՝ որակի ապահովման համակարգի ներդրում, որակի մշակույթի ձևավորում, ինչպես նաև ռազմավարական նպատակների և առաքելության արդյունավետ ապահովմանն ուղղված միջոցների մշակում: Քոլեջի ՈԱԿ-ը գործում է հստակ քաղաքականության հիման վրա՝ նպատակ ունենալով խթանել որակյալ ծառայություններ, ինչպես նաև որակի մշակույթի շարունակական բարելավումը:

Քոլեջն ունի Որակի ապահովման համակարգի տարեկան աշխատանքային պլան, որը ներառում է հաստատության և ՈԱԿ-ի SWOT վերլուծությունը, ինչպես նաև տվյալ տարվա բարելավման ուղղությունները: Դրանց թվում են՝ պրակտիկաների, հաշվետվությունների, հարցաթերթերի և վերանայված կարգերի արդյունավետության մշտադիտարկումը: Պլանում նշված են նաև պատասխանատուները և հստակ ցուցիչները: Այն նախատեսում է հարցումներ, ֆոկուս-խմբային քննարկումներ դասախոսների և ուսանողների հետ՝ նպատակ ունենալով հավաստի տվյալներ տրամադրել կառավարչական որոշումների կայացման համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը 2024-2025 թվականներից ապահովել է 1 լիարժեք դրույք՝ նախկին 0.5-ի փոխարեն, ինչպես նաև տրամադրել է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ (աշխատասենյակ, համակարգիչ):

Քոլեջում իրականացվում են տարբեր շահակիցների՝ ուսանողների, դասախոսների և շրջանավարտների կարիքների վերհանման հարցումներ: Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց

տվեց, որ դրանք ներառում են ինչպես բաց, այնպես էլ փակ հարցեր՝ հնարավորություն տալով շահակիցներին ներկայացնելու առաջարկներ:

Հարցումների արդյունքները քննարկվում են Քոլեջի ղեկավար կազմի հետ, մանկավարժական խորհրդի նիստերում, իսկ առանձին ոչ դրական արդյունքները դիտարկվում են անհատական քննարկումների ընթացքում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցաթերթերի վերանայման գործընթացները ևս անցել են ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլով՝ ներքին շահակիցների ներգրավմամբ: Որոշ հարցումներ, որոնք տվյալներ չեն ապահովել, վերանայվել են:

Որակի ապահովման գործընթացների (հարցումներ, քննարկումներ) իրականացման արդյունքում բարելավվել են տեղեկատվության տարածման մեխանիզմները, կաբինետների աշխատանքները, ինչպես նաև ստորաբաժանումների նիստերի պարբերականությունը՝ որակի ապահովման պատասխանատուի մասնակցությամբ: Որակի ապահովման կենտրոնի նախաձեռնությամբ բարելավվել են ստորաբաժանումների տարեկան աշխատանքների պլանավորման և հաշվետվությունների կազմման մոտեցումները՝ խրախուսելով ինքնագնահատման և վերլուծական բաղադրիչի կիրարկումը: Ստորաբաժանումներում ներդրվել են SWOT վերլուծություններ՝ բարելավման ենթակա ուղղությունների վերհանման նպատակով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Քոլեջի Պրակտիկայի վարիչն ու պրակտիկայի ղեկավարները մշակել են կարողությունների ստուգման ձևաչափ, որը, անցնելով ՊԻԳԲ շրջափուլ, արդեն ներդրվել է «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի ՈԱԿ-ի պատասխանատուն անցկացնում է ոչ ֆորմալ հանդիպումներ ավարտական կուրսի և պրակտիկան ավարտած ուսանողների հետ՝ քննարկելու ուսումնական գործընթացի ուժեղ և թույլ կողմերը: Շրջանավարտների և գործատուների հետ հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ դեռևս չեն իրականացվում:

Քոլեջը մշտադիտարկում է ամբիոնների վարիչների և ուսումնական մասի հաշվետվությունները, ինչպես նաև իրականացնում է սեփական գործունեության արդյունավետության գնահատում, որի արդյունքները ներկայացվում են տնօրենին:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Քոլեջն ապահովել է որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների իրագործման համար անհրաժեշտ փաստաթղթային հիմքերը, վերլուծությունների արդյունքները և համապատասխան տվյալները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինքնավերլուծության գործընթացին մասնակցել են Քոլեջի ղեկավար կազմի ներկայացուցիչները, ինչպես նաև Քոլեջում փորձագիտական աշխատանքի փորձ ունեցող բոլոր աշխատակիցները, այդ թվում՝ ուսանողները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի բոլոր մակարդակներում առկա է հստակ պատկերացում որակի ապահովման գործընթացների կարևորության մասին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման գործընթացը զգալի առաջընթաց է գրանցել վերջին տարիներին: Քոլեջը ներդրել է որակի ապահովման համակարգ՝ սահմանելով անհրաժեշտ քաղաքականություն, կանոնակարգեր և գործողություններ:

Դրական է, որ Որակի կենտրոնի գործունեությունը հիմնված է պլանավորման, կատարողականի վերլուծության և բարելավման պարբերական գործընթացների վրա: Հատկանշական է, որ Որակի կենտրոնը գործածում է տվյալների հավաքագրման բազմազան մեխանիզմներ: Որակի կենտրոնի կողմից անցկացված հարցումների և վերլուծությունների հիման վրա իրականացվում են որակի բարելավման գործողություններ՝ հաշվի առնելով շահակիցների կարիքներն ու առաջարկները: Որակի ապահովման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլը հաջողությամբ կիրառվել է ինչպես ներքին վերլուծությունների, այնպես էլ կրթական ծրագրերի վերանայման ժամանակ:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջը շարունակի ուժեղացնել շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապի ապահովման գործընթացները՝ ավելացնելով հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ և վերլուծություններ: Սա կօգնի ավելի հստակ գնահատել կրթական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին և բարելավել դրանց կառուցվածքը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջի որակի ապահովման համակարգը համապատասխանում է իր ռազմավարական նպատակներին և շարունակական բարելավման համար ունի կայուն հիմքեր, ինչը նպաստում է ուսումնական գործընթացների շարունակական զարգացմանն ու որակի մշակույթի ամրապնդմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո զգալիորեն բարելավվել են որակի ապահովման գործընթացները, որակի մշակույթն ընկալելի է քոլեջի բոլոր շահակիցների կողմից, ներդրվել են տվյալների հավաքագրման բազմատեսակ մեխանիզմներ, առկա են մեխանիզմներ քոլեջում բոլոր գործընթացների արդյունավետության գնահատման համար, առկա է որակի ապահովման համակարգի համապարփակ պլան, որակի ապահովման աշխատանքների արդյունքում բարելավվել են մի շարք գործընթացներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը համապատասխանում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: ԿՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	***ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ***
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ ազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Չի բավարարում**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

21-ը փետրվարի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հերմինե Գրիգորյան՝ 1992 թվականին ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է: 1992 թվականից դասավանդում է Վանաձորի պետական համալսարանում (ՎՊՀ): Ներկայումս զբաղեցնում է Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը և հանդիսանում «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ: Վարում է հետևյալ դասընթացները՝ «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմպլեքս անալիզ», «Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ» և «Ֆինանսական մաթեմատիկա»: Հետազոտական հետաքրքրությունների շրջանակում ընդգրկված են փոփոխական հաստության անիզոտրոպ սալերի եզրային խնդիրները:

Գոհար Մկրտչյան՝ ավարտել է ԵՊՀ ռուսական բանասիրության ֆակուլտետի բակալավրիատը (2005-2009թթ.)՝ «Թարգմանչական գործ» մասնագիտությամբ, այնուհետև նույն ֆակուլտետի մագիստրատուրան (2009-2011թթ.)՝ «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ: Բանասիրական գիտությունների թեկնածու է: Ներկայումս հանդիսանում է Հայկական բժշկական ինստիտուտի (ՀԲԻ) կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար, ինչպես նաև ՀԲԻ հայոց լեզվի և օտար լեզուների ամբիոնի դոցենտ և ամբիոնի վարիչ:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է թարգմանության խնդիրները և ռուսաց լեզվի դասավանդման մեթոդաբանությունը: Մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների և որակավորման բարձրացման ծրագրերի:

Աիդա Դաբաղյան՝ 2002թ. ավարտել է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ ստանալով անգլերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցչի որակավորում: 2008-2013թթ . աշխատել է Դարակերտի միջնակարգ դպրոցում՝ որպես օտար լեզվի ուսուցչուհի: 2016-2020թթ աշխատել է Երևանի հ. 31 հիմնական դպրոցում՝ որպես ֆրանսերեն լեզվի ուսուցչուհի և «Օտար լեզուներ» մեթոդական միավորման նախագահ: 2020թ. -ից մինչ օրս աշխատում է «Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն›› հիմնադրամում՝ սկզբում որպես ֆրանսերենի դասախոս, իսկ 2021թ. մինչ օրս Կրթության որակի ապահովման պատասխանատու և Կադրային հարցերով տնօրենի օգնական: Գործունեության տարիներին մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի:

Արեգ Խալափյան՝ սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

16.12.24 թ. – 18.12.24 թ.

N.	16.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ	09:00	09:50	50 րոպե
2.	Ռեսուրսների դիտարկում	10:00	10:50	50 րոպե
3.	Պրակտիկաների դիտարկում	11:00	13:00	120 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:40	40 րոպե
5.	Հանդիպում տնօրենի հետ	13:50	14:40	50 րոպե
6.	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	14:50	15:40	50 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	15:50	16:40	50 րոպե
8.	Հանդիպում գործատուների հետ	16:50	17:40	50 րոպե
9.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	17:50	18:40	50 րոպե
10.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:50	19:50	60 րոպե

N.	17.12.2024 թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում հանրակրթական առարկաների բաժնի վարիչների և ամբիոնի վարիչների հետ		09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ		10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ		11:50	12:40	50 րոպե
4.	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	12:50	13:40	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»,«Քույրական գործ»,		15:00	15:50	50 րոպե

	«Ատամանտեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների դուալի ղեկավարի հետ				
7.	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	16:00	16:50	50 րոպե
8.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կարիերայի ուղղ. պատասխանատու, Պրակտիկայի վարիչ, Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի տեսուչ, Մեթոդիստ, Լաբորանտների, Կաբինետի վարիչների, Հասարակության հետ կապերի պատասխանատու, Մանկավարժ-հոգեբան, ուս. մասի քարտուղար) ղեկավարների հետ		17:00	18:10	70 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		18:20	19:00	40 րոպե

N.	18.12.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	09:30	10:10	40 րոպե
2.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	10:20	11:00	40 րոպե
3.	Հանդիպում Կրթության որակի պատասխանատուի հետ	11:10	12:10	60 րոպե
4.	Բաց հանդիպում	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:20	14:50	30 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:00	17:00	120 րոպե
8.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:10	17:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	2024 թվականների բյուջեի բաշխում ըստ տողերի	2-րդ
2.	Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ	2-րդ
3.	Ստորոբաժանումների, հաշվետվություններ	2-րդ
4.	Պրակտիկայի ղեկավարների հաշվետվություններ	2-րդ
5.	Հարցումների արդյունքներ գործատուների շրջանում	2-րդ
6.	Պրակտիկաների օրագրեր երեք մասնագիտությունների մասով	3-րդ
7.	Ամփոփիչ հարցաշարեր և մատյաններ, որտեղ կան հանձնաժողովի նախագահների հաշվետվություններ	3-րդ
8.	Առաջադիմության թերթիկներ	3-րդ
9.	Քոլեջում 2024-2025թթ. ուս տարվա ուսանողների թվաքանակը	4-րդ
10.	Քոլեջում 2023-2024թթ. ուս տարվա շրջանավարտների թվաքանակը	4-րդ
11.	Շրջանավատների բազա	4-րդ
12.	Լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ-խմբակների տեսքով	4-րդ
13.	Թափուր հաստիքների համալրման համար կազմակերպված մրցույթին մասնակցած թեկնածուների ցանկ	5-րդ
14.	Գործատու դասախոսների թիվ և ուղղությունները	5-րդ
15.	Շրջանավարտ դասախոսների թիվ	5-րդ
16.	Վերջին 5 տարիներին ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին մասնակցած դասախոսների թիվ	5-րդ
17.	Հուշագրեր կնքած տարածաշրջանի բոլոր ՄԿՈՒ հաստատությունների հետ	8-րդ
18.	Օտարալեզու մասնագիտական գրականության թիվ	7-րդ
19.	Մանկավարժ-հոգեբանի պաշտոնի անձնագիրը	7-րդ
20.	Կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցության տեղական գործընկերների ցանկ	9-րդ
21.	Վարչական աշխատակիցների օտար լեզուների իմացության տվյալներ	9-րդ
22.	Կարողությունների ստուգման ձևաչափ	10-րդ
23.	Պետական ավարտական քննության հարցատոմսի օրինակ	3-րդ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Դուալ ուսուցմամբ կրթության իրականացման համար գործընկեր հյուրանոցներ, բժշկական հաստատություններ,
2. լսարաններ,
3. համակարգչային լսարաններ,
4. լաբորատորիաներ,
5. ջերմոց,
6. արևային էլեկտրակայան,
7. արհեստանոց,
8. ստորաբաժանումներ,
9. գրադարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՕ-Աշխատանքային օրենսգիրք

ԿՏՊՔ-Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

ՄԿՈՒԶԱԿ-Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱԾ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ